5622. 57
1638



№ 1612
120 V
28
U-96

ԾՐԱԳԻՐ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ
ՕՐԻՆԱՑ·

Ի հայրապետութեան Տեառն Յովհաննու Աստուածապատիւ կաթուղիկոսի ամենայն հայոց, և Ասպետի·

Յառաջնորդութեան ռուսիաբնակ հայոց են Ներսեսի սրբազան արքեպիսկոպոսի և Ասպետի·

1832· Ի ՄՈՍԿՈՎ· ՌՄԶԱ·

Ի տպագրատան հայկական ճեմարանի տէրտէր Լազարեանց·

ԼՈՍԱՆԳԵԼՍԻ ՊԻՏՈՒՐՔՑՈՒՆՆԵՐԻ ՓՈՒՆԴԱՄԵՆՏԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՄԱՑԵՑԱՔ ՏՊԱԳՐԵԼ.

Դատաքննիչ գրող Միքայէլ Ծայրագոյն Վարդապետ Սալլանթեանց, Միաբան և Նուիրակ սրբոյ Էջմիածնի.

Ի Մոսկով. Ի 3 Յունվար. 1832.

1437

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ և ԳՐԱԿԱՆ ՌԵՍՊ.
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հա-գանոստրան

4613

ՍՏՈՒԳԱԾ Է
1952 թ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԻՆ ՕՐԻՆԱՑ.

Հրջան առաջին.

Ի սաէղծմանէ ծի մինչ ի Ջրհեղեղն, այ յամ 2262.

Ամբարձումն ծի և սաջին տարեաց, ծննդոց, գլ. ա. է.

Ամենակարողն Աստուած ստեղծ յոչընչէ զերկինս և զերկիր ի նոյն չքնաղուեր և ի պանծալի վայելչուեր, յորում մեք այժմս տեսանեմք։ Յայսմ ստեղծագործուեր արարիչն Աստուած ցուցանէ զամենազօր կարողութիւն իւր, և զսկիզբն և զպահպանուլի յաւիտենական բարեկարգուեր. քանզի յառաջնում աւուր ստեղծեալ զնիւթն՝ ետ նմին և զլոյս։ Յերկրորդումն սահմանեաց զտարածուլի նիւթոյն. յերրորդն մեկնեաց զջուրս ի ցամաքէ, որով ի յայտ եկին ծովք, լիճք, գետք և աղբիւրք, և երեսք երկրի ծածկեցան ծառովք և բուսովք, և այսպէս կազմեցան կենդանեաց բնակարանք և պատրաստեցաւ ճարակ. ի չորրորդ աւուր երեւեցան երկնային մարմինք արեգակն, լուսին, աստեղք և կենդանակերպք ի նոյն կարգադրուեր զոր պահանջէր կապակցուլի նոցին ընդ իրեարս. ի հինգերորդն լցան ջուրք ձկամբք և օդն թռչնովք. ի վեցերորդն ստեղծ Աստուած զկեն-

դանիս որք բնակին 'ի ցամաքի, զԱդամ և զԵ-
ւայ զառաջին մարդս, յորոց ամուսնուէ ծնան
ամ մարդիկ. որք թէպ և ցրուեալ են յերեսս
երկրի, սակայն իբրու զաւակք մի և նոյն ծնող-
ացս, լծակցեալ են ընդ իրեարս եղբայրական
սիրով։

§, 2.

Երրոդէն Վիճակ Նախաստեղծից.

Երկոքին այն նախաստեղծ մարդիկ էին գե-
ղեցիկ յոյժ քան զամ արարածս երկրի. քան-
զի Աստուած շնորհեաց նոցա ոչ միայն զմար-
մին շքեղատիպ, այլ և արար զնոսա ըստ պատկերի
և ըստ նմանութեան իւրում, ցի ետ նոցա զհոգի ան-
մահ և բանական (յորմէ զուրկ են այլ ամ կեն-
դանիք) զարդարեալ կամօք, որ էր յայնմամ
անմեղ և անմատն 'ի չար ցանկութէ։

§ 3.

Ա՛ռաջին էկեղեցին 'ի դրախտին. ծննդ. Բ.

Երկիրն զոր ետ Աստուած 'ի բնակութի ա-
ռաջին մարդկան, էր յոյժ զուարճալի և պտղա-
ւէտ, զոր և կոչեն դրախտ. և համարին զայն լի-
նել Յասիա, յայնմ տեղւոջ, ուր գետքն Տիգ-
ըիս և Եփրատ միանան ընդ միմեանս։ Զ առաջին
աւուրս կենաց իւրեանց վարէին նոքա 'ի զու-
արճալի տեղւոջն յայն յանմեղութի, 'ի ծայրա-
լիր բերկրութի, և յառողջութի. ևս և վայելէին
նոքա 'ի հաղորդութենն ընդ Աստ, որ է առաջին
եկեղեցի։ Ած հրամայեաց նոցա ուտել 'ի
պտղոյ ամ ծառոց, բայց 'ի պտղոյ ծառոյն, որ

'ի ոչ գիրս կոչի՝ Ծառ գիտութեան բարւոյ և չարի, ասայ մի ուտել. իբրու օրէնք եդեալ նոցա զայն, և ասելով թէ պատուիրանազանցութիւն նոցա բերցէ պտուղս մահաբերս.

§ 4.

Ընկնելն 'ի մեղս Ադամայ և Եւայի։ Ծննդ. գ.

Ադամ և Եւայ ոչ զմտաւ ածելով զայն, թէ որ ոչ կատարելապէս Ճանաչէր զոր ինչ օգուտ էր նոցա կամ վնասակար, և թէ պարտ էր նոցա զայն եմ կատարել զոր նայն հրամայէ, մոռացան զպատուիրանն զայն ոչ, և կերին յարգելեալ պտղոյ անտի. բայց նոյնժամայն յետ պատուիրանազանցութեան զգացին յանձինս զծագեալսն յայնմանէ զմահաբեր չարիս, զի ոչինչ գտեալ հնարս արդարացուցանելոյ զինքեանս և ոչ մի 'ի դարձուցանել զկորուսեալն իւրեանց զերանութի, սկսան տառապիլ խղճմտանաւք, և կրել զզանազան թշուառութիս. փոխանակ ուրախութեան՝ արտմութի եղև բաժին նոցին. փոխանակ առատութեան՝ նուազութի 'և աղքատութի. փոխանակ առողջութեան՝ ցաւք և հիւանդութիք. և հուսկ ապա դատապարտեցան ևս մահու մեռանիլ. այսոքիկ թշուառութիք եկեալ հասին ևս 'ի վերայ բոլոր ազգի մարդկան, իբրու յետագայից մեղք նախահարց իւրեանց ախտացելոց։

§ 5.

Գուշակութիւն զքրիստոսէն մերմէ. Ծննդ. Ի.

Աստուած ըստ սիրոյ և ըստ բազում ողոր-

մուէ առ արարածս իւր ոչ կամելով թողուլ զազգ մարդկան 'ի թշուառութեանդ յաւիտեան," խոստացաւ ադամայ և եւայի, ասելով՝ թէ եկեսցէ ժամանակ, և ծնցի յազգէ նոցա փրկիչ, որ ազատեսցէ զնոսա 'ի չարեաց, զորս պատուիրանազանցութիւն իւրեանց ձգեցին յինքեանս և յորդիս իւրեանց, եկեսցէ և տացէ նոցա զերանութիւն զառաջին։ Մինչթարիչս այս մեծ եկեղեցւոյն հնոյ օրինաց, ազատարարս այս մարդկային ազգի և տուողն նախաշեղ շնորհացն, է փրկիչն մեր անուանեալն Յս քս, որ հրաշիւք ծնաւ 'ի կուսէն Մարիամայ, և հաճեցաւ գալ յՅ ոչ նոյն ժամայն յետ անկանելոյ նախահարցն 'ի մեղս, այլ զկնի հազարամեայ անցելոց, զի ազգ մարդկան ծանիցէ բազմօրինակ փորձիւք, թէ որչափ հարկաւոր էր նա 'ի բառնալ զանտանելի բեռինս մեղաց մարդկան։

§ 6.

Կայէն և աբէլ. ծննդ. գ.

Անշուշտ չարիք որք 'ի պատուիրանազանցութէն նախահօրն յառաջ գալոց էին՝ ոչ յապաղեցին երևիլ 'ի տան նը։ Երիցագոյնն երկուց որդւոց նորա՝ կայէն, շարժեալ յատելութիւն ապան զկեղն աբէլ զեղբայր իւր։ Ա՝ չարագործութիւս այսորիկ որ ած անէծ զկայէն՝ ասելով, մի լիցի քեզ բարի և յոչ մի ինչ, մի յաջողեսցին ամ. գործք քո, և օտարայեալ 'ի մարդկանէ միայնակ յերեսս երկրի տատանեսցիս։ Յայնժամ սկսաւ տառապեցուցանել զնա խիղճն

մոաց, և նա զահի հարեալ պատկառանքք և հեծուլք փախեաւ յերեսաց ծնողաց իւրոց, բայց յո և երթայր՝ տանջանք և արհաւիրք առաջնորդէին նմա. և գործեալն ՝ի նմանէ ա-նօրէնուին ամ ուրեք երևէր աչաց նորա, և ղդողանի հարկանէր զնա անդադար։ Ա.նօրէն որդիք և թոռունք նորա բերէին զնմանուլ նախահօր իւրեանց. և էին արտաքոյ եկեղեցւոյն և ոչ ճանաչէին զԱ.ստուած։

§ 7.

Նահապետ յաւաջ քան զջրհեղեղն. յամ ՃԼ 230
ծննդ. Է.

Առ ՝ի վարձատրել զկորուստ աբելի՝ պարգևեաց Ա.ծ ադամայ զայլ որդի, զսէթ։ Յետ այսորիկ մի ոմն հանապազ կառավարէր զեկեղեցին ամ. և այսպիսի կառավարիչք կոչին Նահապետք. որք եղեն թէ յառաջ և թէ զկնի ջրհեղեղին։ Նախ քան զջրհեղեղն էին Ենովս, Կայնան, Մաղալիէլ, Յարեդ, Ենովք, Մաթուսաղա, Ղամէք, և Նոյ։ ՝Ի նահապետացս յայսցանէ առաւել հաճոյ եղև Ա.՝ Ենովք, ունէր զշնորհս մարգարէանալոյ, և հրաշիւք լմն կենդանւոյն փոխեալ եղև յերկինս.

§ 8.

Ա.ծպաշտութիւն յաւաջ քան զջրհեղեղն, և ան-հաւն էհէղէյոյն։ ծննդ. Է

՝Ի ժամանակս յայսոսիկ Ա.ծպաշտուլին կայանայր յակնկալուէ դալստեան աղատարարին, ՝Ի

ղոհս, և 'ի քարոզուլիս։ Բայց յետ ժամանակաց՝ եկեղեցին Ա.Յ եհաս ցայն կէտ ապականուեր 'ի մոլորեց մարդկան, մինչև և ոչ ումեք զոգցես հաւատալ 'ի Աշմարիտն Ա.Ծ, և ոչ ոք էր՝ որ կատարէր զպատուիրանս նորա։ Մի միայն Նոյ և տուն նորա յորում էին անձինք ութն, էին երկիւղածք յայ։ Եւ արար Ա.Ծ ը ժողովրդեան ը այնմիկ՝ զայն ամ, զոր ինչ առնէ հայր բարի առ 'ի խրատել զանառակ որդիս իւր։ Բաղում անգամ բերանով Նոյի յորդորէր զմարդիկ թողուլ զամբարշտութի և դառնալ յառաքինութի, հուսկ ապա ետ նոցա ժամանակ ուղղելոյ զանձինս իւրեանց ամս հարիւր և քսան։ Բայց այս ամ խնամք այ՝ եղեն ումպէտ, աւուրքն այնոքիկ անցին, իսկ մարդիկ ոչ միայն չխորհեցան ուղղել զվարս, այլ առաւել ևս բազմացուցին զմեղս իւրեանց, յոր սակս եկն եհաս ջրհեղեղն 'ի պատիժ ամ չարագործաց բայց 'ի բարեպաշտէն Նոյէ և ամ տան նորա։

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ.

'Ի ջրհեղեղէն մինչև 'ի Գէրու-Ռիւն քաքէլոն, յամ ետ 2262 մինչև յ4902։ ամ 2640.

Հատուած առաջին.

'Ի ջրհեղեղէն մինչև ցելսն Ա.Բրահամու յերկիրն քանանացւոց, ամք 1147.

§ 9.

Ջրհեղեղ համաշարժ, ծննդ. Զ. Է.

Յառաջ քան զջրհեղեղն հրամայեաց Աստուած Նոյի շինել զնաւ մի մեծ, որ 'ի սուրբ

զերս կոչի Տապան, յոր և մտանելոց էր Նոյ ընդ կնոջ իւրում, երեքին որդիք նորա և կանայք որդւոց նորա։ Յորժամ եմուտ Նոյ 'ի տապան անդր՝ էառ ընդ իւր և զկենդանիս որ ոչ կարէին կեալ 'ի մէջ ջրոյ, զերկուս յիւրաքանչիւրոյ 'ի նոցանէ։ Յետ այնորիկ տեղայ յերկնից անձրև յորդախաղաց զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, բացան ամ վտակք և աղբիւրք երկրի, և ջուրն գամ քան զդամ բարձրանայր և ընկղմէր զամ մարդիկ և զանասունս միանգամայն։ Իսկ եկեղեցին Աստ էր 'ի տապանի անդ 'ի տան Նոյի, որ երկրպագանէր Ճշմարտին Աստուծոյ։

§ 10.

Դոպրոյ-ն ջրհեղեղին. ծննդոց. ը.

Համատարած այս պատուհաս տևեաց զամ մի ողջոյն, մինչև սուզաւ ջուրն 'ի ծոց երկրի, և ցամաքեցաւ երկիրն 'ի հողմոց։ Եղին յայնժամ Նոյ և որդիք նորա և անասունք 'ի տապանէ անտի։ Գոհացաւ նոյ զԱստ վասն ազատելոյ զինքն և զորդիս իւր յընդհանուր մահուանէ, և զոհս մատոյց նմա։ Այն այս նուիրուն հաճոյ եղև Աստ, որ խոստացաւ Նոյի և որդւոյ նորա ոչ ևս յարուցանել առ յապայ կայնպիսի ջրհեղեղ։

§ 11։

Աստ Նոյի. ծննդոց. ը։

Նոյի էին երեք որդիք, սեմ, քամ, և յա-

բէթ. 'ի սոցանէ քամ ոչ պատուէր զհայր իւր, վասն նա և որդիք նորա անիծեալ եղեն 'ի նոյէ և կեանք նոցա էին տարաբաղդք. իսկ սեմ և յաբէթ վասն որդիական սիրոյ իւրեանց և յարգուն՝ ընկալան 'ի նմանէ զօրհնուն հայրական. Գոհանայր Նոյ զԱՍ վասն որդւոց և աղօթէր, զի առատաձեռն բաշխեսցէ նց և որդւոց նոցին շնորհս մեծամեծս վասն մեծարելոյ և հնազանդ լինելոյ նոցա նմա։ Եւ այսպէս տարածեցաւ եկեղեցին Աստուծոյ յօրհնեալ ազգի նոցա, մանաւանդ սեմայն, յորմէ ծնաւ արփաքսատ և եղև յետ Նոյի և հօր իւրոյ սեմայ՝ կառավարիչ եկեղեցւոյն Աստուծոյ։

§ 12.

Աշխարհաշինութիւն. ծննդ. ժա. յամի ծն 2790.

Յորժամ բազմացան վերստին մարդիկ յազգէն Նոյի, մոռացեալ զխոստումն ԱՍ, և երկնչելով զի մի ևս լինիցի այնպիսի ջրհեղեղ, եդին 'ի մտի իւրեանց կանգնել զաշտարակ մի բարձր, որ հասանիցէ յերկինս։ Գործս այս էր ամբարհաւաճ, անխոհեմ և ընդ նմին անկարելի։ Իսկ Աստուած կամելով նկուն առնել զամբարտաւանութի նոցա, և զի մի կորուսանիցեն վայրապար զժամանակ և զաշխատանս, այլ վարեսցեն զայնս 'ի գործս բարիս և յառաջեալ շահաւէտս, խառնեաց զլեզուս նց այնպէս, զի ոչ կարէին իմանալ զբանս իրերաց. վասն հարկաւ ցրուեցան 'ի զանազան կողմանս երկրի թողեալ զգործս իւրեանց անկատար։

§ 13.

ԱՇԽՈՒՅԺ ԷՎԷՂԷՑՈՅ ՅԵՒ ՋՐՀԵՂԷՂԻՆ։

Հակամիտուլին առ զդայուլիս որ տիրէր յայնժամ մեծի մասին 'ի մարդկանէ, եղև պատճառ՝ զի նոքա յետ սակաւ ժամանակաց անկան 'ի կռապաշտուլի. և մոռացան թէ պարտ է երկիրպագանել մի միայն ճշմարտին ԱՅ և 'ի նա միայն ապաւինիլ յամ սրտէ։ Սկսան այնուհետև այլ և այլ արարածոց զայնպիսի պաշտամունս մատուցանել, որք վայել էին միայնոյ ճշմարտին ԱՅ, յորոյ բազմեցան մեծամեծ անօրէնուլիք։ Կռապաշտուլիս այս տիրեաց և սև ոմանց նահապետաց երևելի եկեղեցւոյն Աստուծոյ. յոյր սակս Աստուծ կոչեաց զԱբրահամ 'ի հայրենի տանէ նորա յերկիրն քանանացւոց, առ 'ի նորոգել անդ անօր զեկեղեցի իւր։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

'Ի ՀՈՒԷԼՈՅ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՅԵՐԿԻՐՆ ՔԱՆԱՆԱՑ�ւՈՅ ՄԻՆՉԵՒ ՅԵԼՍ ԷՈՐՅԷԼՍՑՈՅ ՅԱՐԳԻՊՈՍԷ, ԱՄՍ 1430.

§ 14.

ՏԷՂԵՓՈԽՈՒԹԻՒՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ. ԾՆՆԴ ԺԷ. ԱՄՍ ԱՇԽԱՐՀԻ 3409.

Խոստացաւ Աստուծ Աբրահամու օրհնել զնա յերկրին քանանացւոց և կարի լիով բազմացուցանել զզաւակ նոր, և զի յազգէ նորա ծնցի փրկիչն աշխարհի։ Աբրահամ հաւատաց բանիցն ԱՅ, և եղեալ 'ի նա զհաստատուն յոյս իւր

յօժարուլ եթող զտեղի հայրենի բնակութեան իւրոյ, և գնաց ի կնոջ իւրում Սառայի և եղբօրորդւոյ իւրում Ղովտայ յերկիր ամենևին նմա անծանօթ։

§ • 15 •

Սուրբ հէնոյ Աբրահամու և սահմանապրութիւն Ի-բրանեան։

Եւ բաղմացաւ տունն Աբրահամու յերկրին քանանացւոց և կազմէր զմի եկեղեցի Աստ 'ի միտսին։ Իսկ ինքն Աբրահամ իբրու հովիւ եկեղեցւոյն այնորիկ, ուսուցանէր նախ՝ զընտանիս իւր բարի օրինակաւ, աշխատ լինելով ունակացուցանել 'ի միտս նոցա զսէր և զպաշտօն, զոր պարտիմք Ամենաբարձրելոյն • բաց յայնմանէ իբրև հայր խնամածու հաստատէր զբաբրօրուլի տան իւրոյ, պաշտպան լինէր ընդոծնեալ իւրոց յամ՝ չարէ, և դարձուցանէր զսիրտս նոցին յառաքինուլի։ Ա՛ռ 'ի տպաւորել զխոստմունս առ ՅԱՏ արարեալս Աբրահամու, 'ի տան նոր սահմանեցաւ թլփատուլի արու մանկանց։

§ • 16 •

Աստ խոսոանայ Աբրահամու զնահակ ոգի։

Հաւատքն և յոյսն Աբրահամու, որ առ Աստ, խաղաղասիրուլի նր, մաերիմ բարեկամուլի առ ամենեսին, հիւրընկալուլի, ցաւակցուլի առ տարաբաղաս, համեստ և խաղաղ վարք ընտանեալ նորա• և որ 'ի մէջ նց կարգեալ միաբանուլի, այնչափ հաճոյ եղեն ՅԱՏ, մինչև օրհնել

ներ զեկեղեցի իւր 'ի տան Աբրահամու, և խոստանալ կարգել զնահակ նահապետ 'ի վերայ այնորիկ։

§. 17.

Հեղուն Մելքիսեդեկի և անօրէնութեանն սոդոմայ և գոմորայ։ Ծննդց. ԺԴ. ԺԸ. ԺԹ.

Արդարև էին ևս արքումանք բաց 'ի տանէն Աբրահամու, որք խոստովանէին զՃշմարիտն Աստ, ոմանք էր Մելքիսեդեկ արքայ սաղեմայ երկիւղած ՅԱՅ։ Իսկ 'ի քաղաքս սոդոմ և գոմոր՝ բնակէին յայնժամ մարդիկ չարամի անօրէնք։ Անդանօր ծնողք մոռացեալ էին զպարտաւորուն իւրեանց կրթել զզաւակս 'ի վարս առաքինիս, և որդիքն ամենևին ոչ պատուէին զծնողս իւրեանց. ամենեքեան առ հասարակ 'ի զեղխուն վարէին զկեանս իւրեանց։ Ամօթ և Աստպաշտուն հեռի էին միանգամայն 'ի նոցանէ, և հուսկ ուրեմն գարշուն անօրէնուն նոցա յաւելաւ ցայն վայր, մինչև երկոքին իսկ անօրէն քաղաքքն այնոքիկ սուղան յանդունդս երկրի և հրկէզ եղեն բոլորովին երկնառաք բոցովն։ 'Ի բնակչաց անտի քաղաքացդ՝ մի միայն առաքինին Ղովտ եղբօրորդին Աբրահամու փրկեցաւ հանդերձ զաւակօք իւրովք։

§ 18.

Փոքրիկն Աբրահամու. Ծննդ. ԻԲ. ԻԳ. ամս Ե. 3/135.

Յայսոսիկ ժամանակս ծնաւ խոստացեալն

Աստուծոյ Աբրահամու որդին Իսահակ։ Մանուկ հեղ էր սա և բարեբարոյ, և յօժարութեամբ առնէր զամենայն, զոր միանգամ հրամայէր նմա հայր իւր Աբրահամ։ Հրամայեաց երբեմն Աստուած Աբրահամու ողջակէզ մատուցանել զԻսահակ, և նորա հնազանդելով կամայն Աստուծոյ և ոչինչ երկբայելով 'ի խոստմունս նորա, վաղվաղակի պատրաստեցաւ 'ի կատարել զհրամանն զայն։ Իսկ մինչդեռ կամեցաւ մխել զձեռս յորդին իւր, արգելեալ եղև 'ի հրեշտակէն. որ ծանոյց նմա, թէ հաճոյ եղեն Աստուծոյ հնազանդութիւն և հաւատքն նորա, որ և յայնժամ եցոյց նմա զնոյն մի 'ի փշեայ թուփն. զի զայն մատուցէ պատարագ փոխանակ Իսահակայ, զոր և արար Աբրահամ փառաբանելով զԱստուած։

§ 19.

Սոբէ վերջ Իսահակայ։

Իսահակ ամենեին զհետ գնայր բարեպաշտութեան և աշխատասիրութեան հօր իւրոյ Աբրահամու, որ կրթէր զնա յայնս հանապազ. զորոյ և կալաւ զտեղին իբրև կառավարիչ եկեղեցւոյն Աստուծոյ։ Յամենայն գործս իւր թէ 'ի սան և թէ 'ի դաշտավայրս խորհէր նա անդադար զԱստուծոյ և խնդրէր զօրհնութիւն նորա, և վասն բարեբարութեան առաջի ընտանեաց գոհութիւն մատուցանէր նմա. յոյր սակս լցոյց զնա տէրն ամենայն բարութեամբք, և խոստացաւ նմա

թէ 'ի ձեռն միոյ 'ի զաւակաց յազգէ նորին ա-
մենայն ազգք մարդկան զփրկութիւն ընկալցին։

§ 20

Անդրէ Յակովբայ 'ի Միջագետս. ծննդ. ԼԷ. ԼԳ.

Իսահակայ էին երկու որդիք, Եսաւ և Յա-
կովբ։ Եսաւ այր էր վայրենաբարոյ, խիստ,
փոյթ 'ի բարկութիւն, և վրէժխնդիր։ Սա
ընդդէմ կամաց ծնողաց իւրոյ էառ զերկուս
կանայս յազգէն, որ բոլորովին ընկղմեալ էր 'ի
կռապաշտութիւնս և յամենայն անառակութիս։
Իսկ յակովբ ընդ հակառակն էր խաղաղ և հեզ,
երկիւղած և հնազանդ ծնողաց իւրոց, յօժա-
րութեամբ մնայր 'ի տան ընդ նոսա և օգնէր
նոցա յընտանի գործս նոցին։ Հռեբեկայ մայր
նոցա կին առաքինի իբրև ետես զԵսաւայ զոր
ըստ օրէ զհակումն յաւէտ յաշխարհային վա-
արձութիւնս քան 'ի բարեպաշտութիւն, և ե-
տեսութէ յանառակ կանանցն Եսաւայ ոչ լիցին
որդիք առաքինիք, զի ոչ գոյր 'ի նոսա ոչ եր-
կիւղ տեառն և ոչ հնազանդութիւն առ ծնողս,
վասն այսորիկ հնարս եդիտ, զի յակովբ առցէ
զօրհնութիւն հօր իւրոյ Իսահակայ։ Այսու
դրդռեալ յակովբայ զբարկութիւն և զնախանձ
եղբօր իւրոյ առ ինքն, ոչ կարաց կալ անկաս-
կած 'ի տան հօր իւրոյ. յոյր սակս և ստիպեցաւ
մեկնիլ 'ի հայրենի բնակութենէն 'ի միջագետս
առ մօրեղբայր իւր Լաբան, առ որում և եկաց
աւելի քան զքսան ամս։ Յընթացս այսր ժամանա
կի ծնան նմա երկոտասան որդիք, որք և յետ նո-

բա եղեն նախադլուխք երկոտասան տոհմիցն Իսրայելացւոց։ Հուսկ յետոյ դարձ արարեալ հանդերձ ամենայն գերդաստանաւ իւրով 'ի տուն հօր իւրոյ, և ընկալեալ զանուն Իսրայելի, յետ Իսահակայ եղև կառավարիչ եկեղեցւոյն Աստուծոյ։

§ 21.

Զյովսէփ վաճառէն էգիպտոս. ծննդ. լբ. շբ

Բազում նեղութիւնս պատճառեցին յակովբայ որդիք նորա չար բնաւորութեամբք և յոռի ընթացիւք իւրեանց. զի ոչ գոյր 'ի նոսա բարեպաշտութիւն, հեղութիւն, միաբանութի և սէր առ միմեանս, որով եկեղեցին Աստուծոյ կարանայր քաղցրանալ յաչս կռապաշտից, որք շրջապատեալ ունէին զնա։ Մի միայն կրտսեր որդիք նորա Յովսէփ և բենիամին արժանի գտան սիրոյ նորա, մանաւանդ Յովսէփ, զոր առաւել սիրէրն յակովբ վասն բարեբարոյութեան նորա և հեղութեան։ Այսու աղագաւ ատեցեալ զյովսէփ. եղբարքն նորա՝ վաճառեցին զնա իբրև զգերի՝ օտարազգի վաճառականաց, 'ի դաշտի անդ՝ ուր նայն առաքեցաւ ընդ եղբարս իւրոյ արածել զխաշինս հօր իւրոյ։ Ոչ զմտաւ ածէին նոքա ամենևին՝ թէ յորպիսի թշուառութիւնս արկին այնու զեղբայր իւրեանց, և յոր դառնագոյն վիշտս ընկղմեցին զծերացեալ հայրն իւրեանց զՅակովբ։

4/978

§ 22.

Բաբէքաղաքումն Յովսեփայ առ Էգիպտացիս. Ծննդ. ԼԸ.

Զ Յովսէփ վաճառեցին գնողքն վերստին ուստն Պենտափրայ, որ էր պալատական արքային Եգիպտացւոց Փարաւոնի։ Գոլով արդէն յօտար երկրի՝ իբրև գերի՝ ծառայէր նա 'ի տանն այլոց, սակայն և յայսմ իսկ վիճակի առաւելապէս ջանայր 'ի համեստութեան և յառաքինութեան ունել զկեանս իւր։ 'Ի սկզբանէ անտի տարաւ նա յօտար երկրի բազում նեղութեանց և հալածանաց վասն համեստութեան և հեզութեան իւրոյ և եթ։ Այլ Աստուած՝ որ թոյլ տայ երբեմն հեզ և առաքինի մարդոց անկանիլ 'ի նեղութիւնս, առանց բառնալոյ 'ի նոցանէ զօգնութիւն իւր, այնպիսի առատութեամբ վարձատրեաց զառաքինութիւն Յովսեփայ՝ մինչև նախատեսութեամբ իւրով և հանճարով երևելի լինել նմա յաչս արքային Եգիպտացւոց, և լինել առաջին իշխան 'ի տէրութեան նորա։ որ վասն նախազուշակութեանն զապագայ սովէն՝ յանձն արար Յովսեփայ պատրաստել զցորեան վասն թագաւորութեանն 'ի ժամանակս պտղաբերս ամացն։

§ 23.

Գոլուսա էքէարց Յովսեփայ յԵգիպտոս. Ծննդ. ԽԲ.

Երբ ընդ անցանել պտղաբեր ամացն պատահեցաւ սով մեծ և թանգութիւն հացի, եղբարք

ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
Ин-тут Мат. и Литературы

Յովսեփայ դան յԵգիպտոս զնել զցորեան։ Դէպ էր Յովսեփայ առնուլ զվրէժ վասն չարութեանն, զոր արարին նմա, սակայն գիտայ նա, թէ մոլութիւն է վրէժխնդրութիւնն և անարժան համեստ և առաքինի անձանց. վնկ բարեկամութեամբ ընկալեալ զեղբարս իւր՝ քաղցրութեամբ յոյժ և սիրով վարեցաւ ընդ նոսա, և առատ պարգևս տուեալ, եթող զնոսա 'ի տուն, և պատուիրեայ նոցա բերել յԵգիպտոս զհայր իւրեանց զՅակոբ, հանդերձ ամենայն գերդաստանաւ նորա։

§ 24.

Գալուստն Յակոբայ յԵգիպտոս։

Դարձ արարեալ մեծաւ խնդութեամբ եղբարց Յովսեփայ 'ի տուն. պատմեցին հօր իւրեանց զորինչ պատահեցաւ նոցա։ Լուեալ Յակոբայ զկենդանի լինել Յովսեփայ՝ լցաւ ուրախութեամբ և առժամայն եկ 'ի Ճանապարհ։ Եւ Յովսեփ՝ ոչ ըստ օրինակի մանկանցն, որոց ստայեալ զմեծութիւն ինչ և զհարստութիւն՝ ամօթ համարին ունել զչքաւոր և զանյայտ ծնողս և բարեկամս՝ վարեցաւ ընդ նոսա, այլ 'ի հեռուստ ելեալ ընդ առաջ հօր իւրոյ՝ եցոյց նմա զամենայն պատիւ և զսէր, ուրախութեամբ մեծաւ ծանոյց արքային զգալուստ հօր իւրոյ առ ինքն ընդ ամենայն գերդաստանի իւրում, և ամենայն օրինակաւ ջանայր, զի Յակոբ անցուսցէ առնա զվերջին աւուրս կենաց իւրոց յերջանկութեան և յուրախութեան։ Այսպիսի օրինակաւ երբեմն եկեղ

ցին Աստուծոյ՝ փոխեցաւ յընտանիս Յակովբայ, յերկրէն քանանացւոց յերկիրն Եգիպտացւոց 'ի Գեսեմ։

§ 25.

Հալածումն Իսրայէլացւոց յԵգիպտոս. էջ ա.

Յետ մահուան Յակովբայ և Յովսեփայ այնչափ բազմացան Իսրայելացիք յԵգիպտոս մինչև երկնչիլ արքայից Եգիպտացւոց, զի մի գուցէ Իսրայելացիք զկնի ժամանակաց ինչ տի լեսցեն նոցա։ Յոր սակս ջանային նախ՝ ազգի ազգի հարկաւ և ծառայութեամբք նեղել զնոսա, և ապա սպառսպուռ ջնջել։ 'Ի ժամանակս հալածմանս այսորիկ՝ արգելաւ ևս Իսրայելացւոց կատարել զպաշտօնն Աստուծոյ և մատուցանել նմա զոհս։

§ 26.

Հայրենադարձն Յովսեփայ. Գիրք յովսեփայ, ամ. ծբ 3759.

Յայսոսիկ ժամանակս, ասեն, եկաց յերկիրն քուս, որ յԱրաբիայ, Յովբ այր մեծատուն և առաքինի յոյժ, զորոյ զհատատուն յոյսն առ Աստուած՝ ոչ կարային խախտել նոյն իսկ ամենատաստիկ տարաբաղդութիւնք։ Յանձնչի 'ի գիրս Յովբայ պատմի, թէ յետ փորձելոյ Աստուծոյ զհամբերութիւն նորա՝ ոչ միայն ազատեաց զնա յամենայն փորձութեանցն, այլ և առատաբար վարձատրեաց զնա անդրէն, զի 'ի բազմապատիկ նեղութիւնս, որոց պիտի էր

նմա տանել, ոչ դադարեայ հնազանդել Աստուծոյ և յուսալ 'ի նա։ Այս օրինակ նորա ապացուցանէ, թէ արտաքոյ երկրին քանանայեցոց, էին և ընտանիք որք ճանաչէին և պաշտէին զՃշմարիտն Աստուած։

§ 27.

Ծնունդ Մովսէսի։ Ամս ՃԺ 3756. Էլիոյ Ի.

'Ի ժամանակս վերոյիշեալ հալածման Իսրայելացւոց Յեգիպտոս, յորժամ ոչ խնայէին Եգիպտացիք և ոչ 'ի նոյն 'ի նորածին յարու մանկունս նոցա, ծնաւ Մովսէս։ Մայր նորա՝ թագոյց զնա առ իւր զքանի մի ամիս, այլ երկուցեալ հուսկ ուրեմն, զի մի գիտասցեն զայնմանէ, եդ զնա 'ի կողով մի հիւսեալ յեղեգանէ, և ծեփեալ զայն խեժիւ եդ 'ի թուփն, որ առ ափն Նեղոս գետոյն, սակայն կեանք նորա ոչ միայր անդ առանց ինչ փորձութեան, եթէ Աճայինն տեսչութիւն ոչ տանէր խնամ փրկութեան նորա։ Եկեալ դատեր Արքայի առ գետն 'ի լուանալ՝ ետես զկողովն, հրամայեաց առնուլ զայն և եգիտ անդ զմանուկն 'ի լալիւն։ Այլ շարժեալ 'ի գութ՝ եդ 'ի մտի պաշտպանել կենաց անմեղ մանկանն։ Այսպիսի օրինակաւ տարեալ Մովսիսի 'ի պալատն արքունի՝ կրթեցաւ անդ մեծաւ հոգողութեամբ։ Նոյնն դիպաւ սմա որ յոլովակի պատահի չքաւորս որքոց, յորոց 'ի պահպանութիւն և 'ի կրթութիւն շարժէ Աստուած զսիրտս առաքինի մարդոց։ Մովսէս եկաց զքառասուն ամ 'ի պալատի Ար-

քային Եգիպտացւոց. և զայլ քառասուն ամս անցոյց նա ՅԱբրաբիա, յոլ՝ թողեալ զարքունի պալատն՝ փախեաւ հալածեալ վասն պաշտպանելոյ զազգական իւր։

§ 28.

Փրկութիւն Իսրայէլացւոց 'ի լծոյ Եգիպտացւոց. էլնց. Ը=ԺԲ.

Այն ինչ՝ օր ըստ օրէ առաւել ևս հալածեալ և չարչարեալ Իսրայելացւոյ չունէին ինչ յոյս փրկութեան անձին 'ի ծանր նեղութենէ յայնմանէ, տեսչութիւնն վերնական առաքեաց զՄովսէս լինել նոցա պաշտպան և փրկիչ։ Սա ընդ եղբօր իւրում Ահարոնի՝ զանազան հրաշիւք հաւանեցոյց զմիտս Ընքային Եգիպտացւոց, զի արձակեսցէ զԻսրայելացիս յերկրէ իւրմէ, զոր թէպ և ատէր 'ի սկզբան անդ, սակայն ստիպեալ ապա 'ի մեծամեծ հրաշիցն՝ արձակեաց զնոսա ՅԵգիպտոսէ։ Այսպիսի օրինակաւ ընկալան Իսրայելացիք զազատութիւն Աստուածպաշտութեան և պահելոյ զհաւատս ըստ օրինաց իւրեանց, կացեալք ՅԵգիպտոս զամս 215 և բազմացեալք թուով մինչև ցերեք միլիոն։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

Ցէլանէլոյն Իսրայէլացւոց մինչև ցԱՍՈՒՍ առաջին արքայն Դաւթայ. ամք. 550.

§ 29.

Եւ Իսրայէլացւոց ՅԵգիպտոսէ ելքն Պաղեստին. էլնց. գլ. ԺԳ. ամք ՃԾ. 3889.

Իսրայելացւոց յառաջքան զելանելն ՅԵգիպտոսէ պարտ էր տօնել յիւրաքանչիւր 'ի տան

զվերջին երեկոյ յառանձին ընթրիս, որ էր պատրաստեալ 'ի զառանէ, և նշանակէր զփրկութիւն մեր զենմամբ Յիսուսի Քրիստոսի։ Յորէս յայսմանէ իսրայելացիք տօնէին զընթրիս զայս ամի ամի, և միշտ զայսու ժամանակաւառ 'ի հաստատուն ունել 'ի մտի իւրեանց զազատութիւնն 'ի ձեռաց Եգիպտացւոց, որ և առ հրէայս կոչի Պասէх, իսկ զառն անուանի՝ զառն Պասկի։ Կարգադրութիւնս այս է կարի շահաւէտ և ճշմարիտ առ 'ի չարկանելոյ 'ի մոռացօնս զաւուրս, յորս Աստուած ետ մարդկան զառանձին բարերարութիւն, զօգնութիւն կամ զազատութիւն։ Օրինակիս այսմիկ հետևին այժմ ևս բազում առաքինի և Աճավախ անձինք, որ կատարեալ ջերմեռանդութեամբ հանդէսս կատարեն յայնոսիկ աւուրս, յորս Աստուած նոցա կամ ծնողաց նոցին և ազգականաց կամ յետ ծանր հիւանդութեան շնորհեալ է վերստին զառողջութիւն, կամ փրկեալ վնասա 'ի դժբաղդութեանց և 'ի փորձութեանց, և կամ զարդ գևեալ բարիս ինչ յօգուտ հասարակաց։

§ 30.

Զ հէտ պՀաէշ ֆարաՀոնի Իսրայէլացւոց, և հէշդՀաՀ շաՀրին։ էլից. ԺԴ.

Յորժամ Իսրայելացիք ելին յԵգիպտոսէ, զգնացս նոցա ուղղէր առանձինն նախախնամութիւն Աստծոյն, 'ի տուէ առաջնորդէր նոցա 'ի Ճանապարհի անդ ամպ՝ որպէս սիւն որ լիջանէր յերկնից, և 'ի գիշերի նման ամին ինչ, որպէս

հուր փողփողեալ, որպէս զի այսու 'ի տուէ և 'ի գիշերի մի մոլորեսցին յուղիղ Ճանապարհէն։ Հասեալ Իսրայելացւոց սոյն օրինակ մինչ 'ի ծովն կարմիր, որ էր արդէն առաջի աչաց նոցա, տեսին յանկարծ ինն զհետ պնդեալ շաւղաց իւրեանց՝ զզօրս Եգիպտացւոց, քանզի զզջացեալ Փարաւոնի վասն արձակելոյն զիսրայելացիս, եհաս առ նոսա և կամէր յետս դարձուցանել զնոսա. յորմէ մարդկօրէն խօսելով չէր հնար հրէից ազատիլ, բայց ամենակարողութիւնն Աստուծոյ ծածկեաց զհրէայս յաչաց Եգիպտացւոց թզպայորդ ամպով, և հրամայեաց 'ի գիշերի անդ հնչել սաստիկ հողմոյ զօրաւորաց, որք զջուրն ողջոյն ցայն կէտ մղեցին 'ի ծով անդր, զի Մովսէս անցցէ զիսրայելացիս ընդ ծովն իբրև ընդ ցամաք։ Պնդեցաւ և փարաւոն յայնժամ զհետ նոցա, բայց ջրոյն միւսանգամ՝ վերադարձեալ 'ի տեղիս իւր, հեղձոյց զնա զօրքն հանդերձ։

§ 31.

Տուն պաշտամանաց և էջերեցութեան կարգաց Իսրայելացւոց։ Ելից ԺԲ=ԻԳ

Զկնի այսորիկ եկին Իսրայելացիք յապառաժն Արաբիա, ուր Աստուած 'ի հնգետասան երրորդ աւուր ելից նոցա յԵգիպտոսէ՝ ետ նոցա զօրէնս իւր 'ի լերինն սինայ ձեռամբ Մովսեսի։ Օրէնքս այս պարունակէին զտասն պատուիրանս, գծագրեալս 'ի վերայ երկուց տախտակաց կամ 'ի վերայ երկուց քարեղէն աղիւսակաց. փա-

լուն ակեալն նոցին ընդհանրապէս, է սիրել զԱստուած առաւել քան զամենայն ինչ, և սիրել զընկերն՝ որպէս զանձն։ Բայց 'ի տասն պատուիրանացս յայսցանէ ետ Աստուած Իսրայելացւոց 'ի ձեռն Մովսեսի և զայլ բազում օրէնս, որք հային յեկեղեցական և 'ի քաղաքական կարգադրութիւնս նոցա։ Եկեղեցի նոցա կոչեցաւ խորան ուխտի, որ էր վրան մեծ, ուր հանդիսիւ մեծաւ լինէր աստուածպաշտութիւն և բաժանէր յերկուս մասունս, յորոց առաջինն և մեծն կոչիւր սրբութիւն, և երկրորդն՝ սրբութիւն սրբոց. իսկ բոլոր խորանն պատեալ էր մեծաւ ցանկով։ 'Ի սրբութեան սրբոց եդեալ էր տապանակ ուխտին՝ ուր պահէին տախտակք պատուիրանաց, սափորն ոսկեղէն լի մանանայիւ, և գաւազանն Ահարոնի։ Աստուածպաշտութիւն նոցա կայանայր 'ի զանազան զոհս, զորս աղօթիւք մատակարարէին 'ի խորանին ուխտի։ Զհրապարակական զոհս մատուցանէին ղևտացիք և քահանայք։ Ղևտացի կոչէին առաջինք վասն այն, զի էին յազգէն Ղևեայ միոյ յորդւոյն Յակովբայ։ Իսկ քահանայքն՝ էին որդիք և թոռունք Ահարոնի, որք կային ընդ իշխանութեամբ միոյ քահանայապետի։

§ 32.

Քառասնամեայ ճանապարհորդութիւն Իսրայելացւոց ընդ Արաբիա։

Իսրայելացիք զամս 40 ճանապարհորդեցին ընդ Արաբիա յառաջ քան զհասանել իւրեանց

յերկրին քանանացւոց, յոր թէպէտ կանխագոյն ևս մնալի էր նոցա ժամանել, սակայն ծառայութիւնն ընդ լծով արքային Եգիպտացւոց յընթացս 215 ամաց, այնչափ փոխեաց զբարս նոց, մինչ զի սկսան նոքա լինիլ երկչոտ, փոքրոգի և կասկածոտ, յոյր սակս բազում անգամ վրդովմունս յարուցեալ 'ի ճանապարհի ոչ հնազանդէին առաջնորդաց իւրեանց և ոչ յուսային Աստուած, որ և եղև պատճառ այսր երկարատև ճանապարհորդութեան նոցա։ Իսկ Աստուած կամեցաւ ցուցանել նոցա զամենակարողութիւն իւր և զբարութիւն. քանզի յամենայն առաւօտու առաքէր նոցա պատրաստական կերակուր, որ էր մանանայ ի ջեալ յերկնից և ևս և առաջնորդէր նոցա անդադար կամ ամպով կամ սեամբ հրավառ։ Յընթացս 40 ամացս այսոցիկ յելելոց անտի Եգիպտոսէ կենդանի մնացին միայն երկու անձինք, և մին յերկիրն քանանացւոց ընդ որդիս այլոց, որք կացուցին զնոր ազգ Իսրայելացւոց։

§ 33.

Վախճան Մովսէսի. ամ Ե. 3879.

Մովսէս զամս քառասուն առաջնորդեաց ելկեղեցւոյն Աստուծոյ, և 'ի միջոցի այսչափ ժամանակաց կրեաց բազում տառապանս. և վճարեցաւ 'ի կենացն, ոչ հասեալ յերկիրն քանանացւոց։ Տեղի թաղման Մովսիսի վասն այն, որպէս կարծի, մնայ անյայտ ծածկեալ, զի մի

լեցի հրէից առիթ մոլորութեան Աստուածա-
ցուցանելոյ ընա։

§ 34.

Հինգ գիրք Մովսէսի.

Զոր ինչ գիտեմք մեք զարարչութենէ ՅԻ՝
գրեաց Մովսէս 'ի հինգ գիրս, այսու կարգաւ։
Առաջին գիրքն կոչի Ծնունդք, քանզի 'ի նմա
նկարագրի ստեղծուածն։ Յի. յոր և պարունա-
կին դիպեալքն

1 նախ քան զջրհեղեղն. գլ. 1=5.
2 'ի ժամանակի ջրհեղեղին. գլ. 6—9. և
3 զկնի ջրհեղեղին. գլ. 10=50։

Երկրորդ գիրն կոչի Ելք. վասն զի 'ի նմա ճա-
ռին դիպեալքն

1 յառաջ քան զելս Իսրայելացւոց յԵգիպ-
տոսէ. գլ. 1—11.
2 'ի ժամանակի ելից. գլ. 12—13. և
3 որ զկնի այնորիկ. գլ. 14—40.

Երրորդն կոչի Ղևտական, յանուանէ Ղևտա-
ցւոց և քահանայից, աստ պատմի

1 զպատարագաց. գլ. 1—7.
2 զքահանայից. գլ. 8—15,
3 զտօնից հրէից. գլ. 16—23.

Չորրորդն կոչի Թիւք, վասն թուոյ որդւոցն
Իսրայելի, և յայնմ ճառի

1 զորպիսութենէ ղևտականաց. գլ. 1—10.
2 զհասանելոյ Իսրայելացւոց մինչև ցսահ-
մանս երկրին աւետեաց. գլ. 11—19.

3 զանցից անցելոց 'ի քառասներորդ և 'ի վերջին ամի Ճանապարհորդութեանց. գլ. 20—36. Հինգերորդն կոչի Երկրորդ օրինաց, վասն որ 'ի նմա կրկնութեանն օրինաց, սա պարունակէ յինքեան

1 զկրկնութիւն Աստուածային օրինաց առ 'ի զարթուցանել 'ի ժողովրդեան զշնորհակալութիւն. գլ. 14.

2 զկրկնութիւն օրինաց առ 'ի խրախուսել զմարդիկ 'ի հնազանդութիւն. գլ. 5—26.

3 զհաստատութիւն օրինաց. գլ. 27—30. և

4 զվերջին գործս Մովսիսի. գլ. 31—34.

Այսքիկ գրեանք, ևս և գիրքն Յոբայ են վաղեմիքն. և առ հրէայս, որք միով բառիւ կոչէին զայնս կտակարան, էին 'ի մեծի յարգութեան. բայց և եկեղեցին նորոյ կտակարանիս ընկալաւ զայնս, ոչ միայն վասն որ 'ի նոսա պարունակեալոցն կամ վասն հնութեն, այլ և զի քո և առաքեալք նորա բազում անգամ առաջի առնէին զվկայութիւն 'ի գրոցն յայնցանէ:

§ 35.

Մուտ Իսրայէլացւոց յերկիրն Խանանացւոց և քաժանումն երկրին 'ի մէջ նոցա.

Զ տեղի Մովսիսի կալաւ Յեսու որդի Նաւեայ: Սա եհան զԻսրայելացիս յանապատէն արաբիոյ և տարաւ յերկիրն քանանացւոց, նուաճեաց զայն 'ի սուղ ժամանակի ընդ իշխանութեամբ Իւրով. բաժանեաց 'ի մէջ ինն և

կէս աղգայն Իսրայելի, որք են տոհմք Յուդայի, Շմաւոնի, Բենիամինի, Գադայ, Եփրեմայ, Զաբուղոնի, Իսաքարայ, Ասերայ, Նեփթալիմայ և կէս տոհմին Մանասէի, քանզի Ռուբէն և Գադ և կէսն տոհմին Մանասէի կանխագոյն ստացեալէին 'ի բաժին զերկիրս յայնկոյս գետոյն Յորդանանու։ Իսկ զևտականք և քահանայք ցրուեալ էին ընդ երեսս բոլոր երկրին։ Յեսու որդի Նաւեայ մեռաւ յետ քանի մի ամաց մըսիոն Իսրայելացւոց յերկիրն քանանացւոց։ 'Ի զիրս Յեսուայ որդւոյ Նաւեայ գրի

1 զյաղթուէն երկրին աւետեաց գլ. 1—12.
2 զբաժանմանէ նորին. գլ. 13—24.

§. 36.

Դաժանութիւն Իսրայէլացւոց. յԷհուայ, գլ. 24—36.

Յետ մահուան Յեսուայ որդւոյ Նաւեայ եկեղեցին Աստուծոյ եղծաւ։ Իսրայելայիք ոչ ևս պահէին զպատուիրանս նորա. և մոռացեալ զսաստիկ յորդորանս նորա բազում անգամ դառնային 'ի կռապաշտութիւն և 'ի մեղս քանանացւոց, վասն այսր պատճառի լքեալ 'ի յուսոյ առ Աստուածն Ճշմարիտ, սկսան թուլանալ 'ի զօրութենէ և 'ի հաստատութենէ, որովք նոքա մինչ ցայն վայր զարհուրելի էին թշնամեաց իւրեանց։ Մովաբացիք, Քանանացիք, Մադիանացիք, Ամմոնացիք, մանաւանդ Փղշտացիք տեսեալ զայսպիսի տկարութիւն և զթուլութիւն նոցա, բազում անգամ յարձա-

կէին 'ի վերայ նոցա։ Սակայն թշուառութիւնն այն յետին, յորում գտանէին իսրայելացիք յարշաւանաց ազգացս այսոցիկ, ստիպեաց զնոսա դառնալ առ Աստուած զղջմամբ, յետ որոյ փրկեաց զնոսա Աստուած 'ի լծոյ այլազգեաց 'ի ձեռն քաջարանց, որք ապա կալան զտիրապետական իշխանութիւն յազգին և կոչէին Դատաւորք։ Իսկ որ ինչ 'ի ժամանակս դատաւորաց պատահեցաւ, գրեալ են 'ի գիրս դատաւորաց, որ պարունակէ յինքեան

1 զկեանս դատաւորաց իսրայելացւոց։ գլ։ 1—16։

2 զամբարշտութի իսրայելացւոց։ գլ։ 17—21։

Յաւուրս դատաւորացս այսոցիկ կեայր աղքատ բայց առաքինի այրի մի, զոր Աստուած օրհնեալ պտակեաց ընդ բոոսայ, յորոյ ամուսնութենէն ծնաւ ալքայն Դաւիթ։ 'Ի գիրս Հռութայ գրին կեանքն Հռութայ։ գլ։ 1—14։ և սերունդք Դաւթի։ գլ։ 18—22։

§ 37։

Հէղի քահանայ իսրայէլացւոց, ամ ՃԼ։ 4356։

'Ի միջի դատաւորաց նշանաւորն սակս անհոգութեան 'ի դաստիարակութեան որդւոց իւրոց, է Հեղի։ որ էր և քահանայապետ։ Որդիք նորա ոչ երկնչէին ծանակել ևս և առ հրապարակական Աստուածպաշտութեամբ զօրէնս Աստուծոյ, և առնել զգանազան անկարգութիւնս 'ի պատրանս և 'ի կորուստ այլոց։ Հեղի ոչ

պատժէր զորդիս և ոչ մոռանէր զուղղութենէ նոցա։ Ամենեքին նոքա մեռան միով մահուամբ, քանզի կոտորեցան 'ի պատերազմին, որ ընդ վիշտայիս։ Իսկ հեղի հայր նոցա լուեալ զդառնաղէտ համբաւն մահուան որդւոց՝ իւրոց, և զգերութիւն տասանակի տեառն, անկաւ յերկիւղէն յաթոռոյ իւրմէ և մեռաւ։ Այսպիսի անհոգ ծնողք, որք ոչ պատժեն զորդւոց իւրեանց զկամակորութիւնս և զանկարգութիւնս, տարաբաղդ առնեն և զանձինս և զորդիս իւրեանց։

§ 38.

Սամուէլ հարգարէ վերջին դատաւորք իսրայէլացւոց. ամ ՇԻ. 4377.

Սամուէլ յազգէն ղևտացւոց էր վերջին դատաւոր իսրայելացւոց, որ բնակէր 'ի տան հեղեայ ընդ հրամանօք նորա։ Աստ թէպ դիւրին էր նմա անառակիլ յանօրէն որդւոց հեղեայ, այլ սակայն բարեպաշտ մայր նորա աննա սկսաւ ուսուցանել նմա 'ի մանկական տիոց անտի զպատուիրանս Աստուծոյ և խրատել 'ի բարին։ Այս բարի և նախատես կրթութիւն այնքան արմատացեալ էր 'ի սրտի նորա, մինչ զի նա 'ի միջի չարաբարոյ որդւոց հեղեայ զարգացեալ յառաքինութեան և 'ի բարեբարոյութեան, եղև սիրելի յաչս Աստուծոյ և ժողովրդեան։ Սա արմատախիլ արար յազգէն իսրայելացւոց զկռապաշտութիւն, եմոյծ զՀշմարիտ Աստուածպաշտութիւն, և կառոյց զուսումնարանս վա

ուսուցանելոյ զպատուիրանս Աստուծոյ։ Անառակ վարքք որդւոցն Սամուէլի անհաւան և յոռի երևեցան յաչս իսրայելացւոց. վասն խնդրեցին 'ի նմանէ զի տացէ նոցա զթագաւոր, որ տիրեսցէ նոցա ըստ օրինակի մերձակայ ազգաց։ Ապա այսորիկ հրամայեաց Աստուած Սամուէլի, զի օծցէ թագաւոր զՍաւուղ։

ՀԱՏՈՒԱԾ ՁՈՐՐՈՐԴ։

Յառաջին Խաղաղութեան իսրայէլացւոց 'ի Սաւուղայ մինչև 'ի գերութիւնն Բաբելոնի. 513 տարի։

§. 39.

Կէսն Սաւուղայ. տարի ութերորդն Ցի. 1389. ա Խաղաղոյց. գլ. 9.

Սաւուղ առաջին թագաւոր իսրայելացւոց 'ի տիս մանկութեան իւրոյ էր հեզ և իմաստուն։ Օգուտ բաղում եցոյց սա տաճարին տն, մաքրելով զայն 'ի մոգուց և 'ի հմայից. յորս սնոտիապաշտք առաւել յուսային քան 'ի նախախնամութիւնն Աստուածային։ Բայց սակայն չէր սաւուղայ բաւական լինելն 'ի մանկութեան իւրում միայն և 'ի սկզբան թագաւորութեան հեզ և խոհեմ (ա թագ. գլ. 2)։ Պարտ էր նմա և զՓեսացեալ աւուրս կենաց իւրոց անցուցանել յառաքինութեան և յերկիւղի Աստուծոյ։ Սակայն նա ոչ եկեաց այնպէս. այլ ընդ հակառակն եղև ինքնահաճ, անհնազանդ

Աստուծոյ, կասկածոտ, և հուսկ ուրեմն այն-
չափ մեծատիպաշտ, մինչև երթալ նմա առ
կին մի վհուկ անցեալ զաւուրքք, և կարծել
'ի ձեռն գիւթական արուեստին իմանալ 'ի
նմանէ զելս պատերազմին, զոր 'ի մտի ունէր
յայնժամ առնել ընդ փղշտացւոց։

§ 40։

Հէլո-Ի-ն Դաւիթ. ամ Ցի. 4429. Ի Թագ.
գլուխ. 5. 6. 7. 8.

Դաւիթ, եկդ թագաւոր իսրայելացւոց էր
մեծահոգի, անվեհեր, անյիշաչար, առատաձեռն
առ աղքատս և տնանկս, և հեղամիտ 'ի մեծու-
թեան իւրում։ Սա էառ յեբուսացւոց զլեառն
Սիոնն, որ եղև այնուհետև տեղի բնակութեան
նորա և պահպանութեան տապանի տեառն՝
առաջին սրբութեան իսրայելացւոց։ Այն այս
Դաւիթ հատոյց զԱծպաշտութիւնն 'ի լաւագոյն
լիճն վիճակ. ժրաջան խնդրելով օժանդակել
և պայծառացուցանել զտաճար տեառն, և հան-
դիսացուցանել զինքն 'ի բարձրութիւն հպա-
տակաց իւրոց։ Աղմոսերգութիւնք նոր են այսմ
պատգամք, յորս մարթի է գտանել

1 զվսեմ և զլուսաւոր զիդէայս զԱստուծոյ,
զբազում օգտաւոր խրատս, զոր տայ նա ժողո-
վրդեան, նկարագրելով յաչս նց զգեղեցկութիւն
առաքինութեան և զատելութիւն մեղաց։

2 զհաստատուն սէր առ Աստուած և
զկատարեալ մխիթարութիւն 'ի թշուառութեան։

3 զգաղափար աղօթելոյ ջերմեռանդութիւն։

4 Զ գոհութիւն զԱստուծոյ վասն պարգևելոյ նմա զօգնութիւն և զողորմութիւն։

5 Զ գուշակութիւնս վասն փրկչին ծի։

Սակս հոգեշարժ խրատուցն, զորս սաղմոսերգութիւնքն յինքեանս պարունակեն, յօրէնս եմոյծ եկեղեցին քրիստոնէական ընթեռնուլ զոմանս 'ի նոցունց յիւրաքանչիւր աւուր 'ի ժամասացութեան։

§. 41.

Թուլութիւնք Դաւթի և զղջումն նորա. Բ Թագ. 13. և 14.

Սակայն Դաւիթ չէր բոլորովին ազատ 'ի մեղաց։ Տարապայման սէր նորա առ որդի իւր Աբիսաղովմ էր առիթ չար ընաւորութեանն նորա, որ և բազում տրտմութիւնս պատճառեաց հօր իւրում, և եղև ինքնին իսկ պատճառ կորստեան իւրոյ։ Իսկ Դաւիթ տուեալ զանձն դատարկութեան և ունայնութեան, գայթակղեցաւ և մեղաւ առաջի տեառն։ Բայց ոչ հայեցեալ յայս ամենայն, 'ի բազում սաղմոսերգութիւնս նորին երևին ճշմարիտ նշոյլք անկեղծ զղջման նորա, յորս ջերմեռանդն սրտիւ խոստովանի զմեղս իւր առաջի Աստուծոյ և բեկեալ սրտիւ հայցէ 'ի նմանէ զթողութիւն։

§ • 42 :

Սաղոմոն ՝ Գրուածք Նորա, ամ՝ Ցն 3469 • գ • Ռագ • 1 • 2 •

Դաւիթ ՝ի վերջին աւուրս կենաց կարգեաց ինքեան ժառանգ զորդին իւր զսաղոմոն • զի էր նա յոյժ իմաստուն : ՝Ի սկզբան անդ մտադիւր ղՀետ գնայր սաղոմոն բարի բարի խրատուց հօր իւրոյ , զոր ետ նմա ՝ի յետին աւուրս կենաց իւրոյ : Կանգնեաց սա զաաՃարն զայն հոյակապ յերուսաղէմ 1000 ամօք նախ քան զծնունդն Քրիստոսի, և նորոգեաց զՀին ծէսս Աստուածպաշտութեան: Իմաստութիւն և երջանկութիւն նորա փառաւորեսցին յերկրիս յայսմիկ • սակայն ՝ի ծերութեան իւրում զանց արար զպատուիրանօք տեառն և մեղաւ • քանզի մոլորեալ ՝ի կանանց իւրոց հեթանոսաց , դարձաւ ՝ի կռապաշտութիւն : Սաղոմոն գրեաց զերիս գիրս , որք են • գիրք առակաց, ժողովող, և երգք երգոց: ՝Ի գիրս առակաց պատմէ

1 Զքրիստոսէ , որ է սկիզբն և աղբիւր ամ իմաստութեան • գլ • 1•—9 •

2 Զհոգեշահ խրատուց ինչ սակս կենաց • գլ • 10•—24 •

3 Զանաղան առակս բարոյականս • գլ • 25•—13•

՝Ի գիրս ժողովողն քննէ նա

1 Զունայնութիւն աշխարհիս • գլ • 1•—2 •

2 Զբարին ծայրագոյն • գլ • 3 •

3 Զեղանակն հասանելոյ առ բարին • գլ • 4•—12 •

Յերգս երգոց պարունակի

1 Ընձալիր ակնկալութիւն հաւատացելոց առ գալուստն Յիսուսի Քրիստոսի։

2 Լցուն բաղձանաց 'ի գալստեան քո։ գլ. 2.

3 Բանք հաւատացելոց ընդ քոյ գլ. 3.—8.

Ընծայի եւս նմա գիրքն իմաստութեան, յորում ամփոփին 10. գլխք. որք պարունակեն յինքեանս զգեղեցիկ խրատս բարոյականս և զպատմութիւն ողորմութեանցն Աստուծոյ հաղորդելոց ազգին իսրայելի։

§ 43.

Բաժանումն 12 ազգացն Իսրայելացւոց 'ի Խաղաւորութիւն։

Յետ մահուան սաղոմոնի տասն գլխաւոր տոհմք ապստամբեցան 'ի ըռբոամէ յորդւոյն սողոմոնի, և ընտրեցին իւրեանց թագաւոր զՅերոբոամ, իսկ երկու ճեացեալ ցեղք՝ յուդայեանք և բենիամինք, կացին ճեացին նմա հաւատարիմ, և փոքրիկ տէրութիւնս կոչեցաւ յայնմհետէ թագաւորութիւն յուդայ կամ հրէից։

Իսկ միւսն որ նորոգ կանգնեցաւ 'ի միաբանութենէ տասն տոհմից՝ անուանեցաւ իսրայելացւոց։ Բաժանումս այս էր վնասակար եկեղեցւոյն նախ քան զինքեան, և տպա ըստ յառաջ եկելոց յայնմանէ պատերազմաց։

§. 44.

Կո

տին Աստուծոյ։ Սա կանխաւ գուշակեաց արքային աքաքու զանշուշտ չարիսն, որք գալոց էին 'ի վերայ ազգին վասն մոռանալոյ նոցա զՀշմարիտն Աստուած. զսոյն զայս քարոզէր զկնի նորա և մարգարէն եղիսէ. բայց ալքայք իսրայելացւոց ոչ ունկն դնէին բանիցն նոցա. այլ թաղեալ կացին ճնացին 'ի նախնի կռապաշտութիւնս իւրեանց և յանօրէնութիւնս։ Սոքա ևս սկսան թշնամանալ թագաւորութեանն հրէից, կռեցին դաշինս ընդ եգիպտացիս ընդդէմ ասորեստանեայց, որ եղև իսկ պատճառ կորստեան նոցա. քանզի արքայն ասորեստանեայց Սաղմանասար յաղթեալ ալքային իսրայելացւոց յովսեայ տարաւ զնա և զբաղումս 'ի տասանց տոհմից իսրայելի 'ի գերութիւն յասորեստան. իսկ 'ի սամարիայ և յայլ երկիրս իսրայելացւոց բնակեցոյց զՀեթանոսս, որք յայսմ հետէ սկսան կոչիլ սամարացիք։ Տասն ցեղքս այսոքիկ ոչ դարձան 'ի հայրենիս, այլ ցրուեալ ճնացին յայլ և այլ երկիրս օտարոտիս։

§. 46.

Ներքին դուքերոյ աստուած.

Նոյն արդարև և 'ի գերութեանս յայսմիկ 'ի միջի իսրայելացւոց արք երկիրղածք Աստուծոյ, յորոց էին և տուբիթք, հայրն և որդին։ Սոքա ունէին զվարս առաքինիս և օգնէին քաղաքացեաց իւրեանց տնանկաց, կերակրէին զնոսա, զգեցուցանէին և թաղէին զանտերունչ նընջեցեալս։

Երէցն տոբիթ 'ի մահիճս իւր մերձ 'ի մեռանիլ՝ ետ որդւոյ իւրում տոբիթայ կրտսերի զայս խրատ։ Յամենայն կեանս քո կա՛ զԱստուած
,, 'ի սրտի քում և առաջի աչաց քոց, և հե-
,, ռի՛ լեր 'ի չարագործաց, որք ընդդէմ պա-
,, տուիրանաց Աստուծոյ մեղանչեն։ Լեր ողոր-
,, մած առ աղքատս. եթէ է քո բազում ինչ
,, բաշխեա՛ նոցա առատաձեռն. իսկ եթէ սա-
,, կաւ՝ տո՛ւր 'ի սակաւուց անտի յօժար կամօք
,, և 'ի մաքուր սրտէ։ Լո՛ւր բարի խրատուց
,, արանց իմաստնոց։ Հանապազ զԱստուծոյ
,, գոհացի՛ր վասն ամենայն բարութեանց նո-
,, ցա, և հայցեա՛ զի զգործս քո միշտ 'ի բա-
,, րին առաջնորդեսցէ, և զգնացս քո ըստ
,, սուրբ կամաց իւրոց ուղղեսցէ։ Պատանին տոբիթ ունէր զկարի առաքինի վարս, փութով վարեցաւ զհետ փրկաւէտ և բարի խրատուց զորս աւանդեաց նմա հայր նորա։ Զամենայն գործս իւր սկսանէր աղօթիւք, առ երախտաւորս իւր և բարեկամս էր միշտ երախտագէտ, և պատուէր զնոսա անկեղծօրէն. առ ծնողս իւր մինչև 'ի մահ նոցա ցուցանէր զյարատև գորով իւր զորդիական, և ըստ կարեաց իւրոյ միշտ բարիս առնէր արենակցաց և մերձաւորաց։ Յոյր սակս և որդիք որդւոց նորա վայելէին առատապէս 'ի բարօրութեան, սիրելեալք յԱստուծոյ և 'ի մարդկանէ։

§. 47.

Ինչ էր ՚ի Ռագաւորութեան յուդայ.

'Ի թագաւորութեան յուդայ դեռ երկիրպագանէին ճշմարտին Աստուծոյ 'ի տաճարին երու-

սաղեմայ, յոյր սակս բազումք յայնցանէ, որք 'ի թագաւորութեան իսրայելացւոց զեկեղեցի Աստուծոյ պաշտէին, վերադարձան 'ի թագաւորութիւնն հրէից։ Երրորդ արքայն հրէից Ասա և չորրորդն Յոսափաթ փոյթ 'ի մէջ առնուին նորոգ վերականգնել 'ի թագաւորութեան իւրեանց զպաշտօն միայնոյ և ճշմարտին Աստուծոյ։ Իսկ յետ ժամանակաց յայնպիսի մոլորութիւնս շաղախեցան, մինչ սկսան ըստ օրինակի հեթանոսաց պաշտել զմողոք։ Եզեկիա տասներորդ թագաւոր հրէից այր բարեպաշտ, նորոգեաց զԱստուածահաճոյ պաշտօնն. և վասն այնորիկ Տէր Աստուած եցոյց նմա զիւր ողորմութիւն, հրաշալի փրկութեամբն 'ի ձեռաց զօրաւոր արքային ասորւոց սենեքերիմայ։ Վեշտասաներորդ արքայն հրէից Յոսիա եցոյց նոյնպէս զսէր իւր և զհնազանդութիւն առ Աստուած և առ օրէնս նորին։

§. 48.

Գէրուբիմներ քաքէլոնի.

'Ի թագաւորաց անտի հրէից չորք էին հեզ և բարեպաշտ, որք են, Ասա, Յոսափաթ, Եզեկիա, և Յոսիա։ Վեշտասանքն թէ վասն արենակցութեան և բարեկամութեան իւրեանց ընդ արքային իսրայելացւոց, թէ վասն խառնակութեանցն ընդ մօտակայ ազգս կռապաշտից, կալան զվարս և զարարողութիւնս հակառակս ճշմարիտ Աստուածպաշտութեան.

յոյը սակս և եկեղեցին զկնի ժամանակաց ինչ դամ քան զդամ գայը մերձենայը յապականուլ։ Տեսեալ բաբելացւոց արքային Նաբուգոդոնոսորայ զայսպիսի տկարութիւն նոցա՝ սկսաւ յարձակիլ 'ի վերայ նոցա, և հուսկ ապա կործանեաց զԵրուսաղէմ և զտաճարն, և տարաւ զբոլոր ազգն հրէից 'ի գերութիւն, յորմէ ազատեալ դարձան 'ի հայրենիս իւրեանց զկնի 70 ամաց։

§ • 49 •

Մարգարէք ցգերութիւնն Բաբելացւոց •

Ընդ իշխանութեամբ թագաւորաց երևէին երբեմն մարգարէք, այսինքն անձինք, որոց պարգևեալ էր 'ի վերուստ առանձին իմն շնորհք կանխասել զապագայս, գործել զհրաշս, խրատել զչարս յուղղութիւն, և հաստատուն առնել զբարեպաշտութիւն առաքինութեան։ Այսպիսի անձինք հետևեալք միմեանց զկնի են սոքին • Աբդիա եկաց 'ի ժամանակս արքային հրէից Յոսափաթայ • իսկ յարքայէն հրէից Յաղարիայ մինչև յեղեկիա, յընթացս 113 ամաց երևին այսոքիկ յետագայք։

1 Յովնան, որ էր յերկրին Իսրայելացւոց և քարոզէր զապաշխարութիւն նինուէի, մայրաքաղաքին ասորեստանեայց։

2 Յովսիա քարոզեաց յերկրին Իսրայելացւոց։

3 Յովէլ 'ի թագաւորութեան յուդայ։

4 Ամովս 'ի ցեղէն Յուդայ նոյնպէս քարո-
ղեաց 'ի թագաւորութեան Իսրայելացւոց։
5 Նասայի մարգարէացաւ 760 ամօք նախ քան
զՔրիստոս զծնունդենէ նորա (գլ. է։ 14. գլ.
թ։ 6. 7. գլ. ժա։ 1. 2.) զչարչարանաց և
զորոց զկնի այնոցիկ։ գլ. ծգ.
6 Միքիա, որ սկսաւ քարոզել սակաւ ինչ
յետոյ 'ի թագաւորութեան Հրէից, մարգարէ-
ացաւ զքն է, թէ ծնցի 'ի Բեթղեհեմ. գլ.
ե։ 2.

Զկնի սոցա, յառաջքան զգերութիւնն Բա-
բելացւոց յընթացս 55 ամաց քարոզէին սո-
փոնիա, Երեմիա, և ամբակում. յորոց երկու
վերջինքն մարգարէացան նոյնպէս և 'ի ժամա-
նակս գերութեան Բաբելացւոց. իսկ Երեմիա
նախաձայնեաց, թէ ազգն Հրէից ամս 70 լիցի
'ի գերութեան Բաբելացւոց. գլ. իե. 11, 12.

§. 50.

Մարգարէական գրութիւնք.

Գրուածք այսոցիկ մարգարէից աւանդեցան
մեզ յԱստուածաշունչ գիրս, և գլխաւոր բո-
վանդակութիւն նոցին է զոգցես մի և նոյն.
քանզի նք կամ ապառնան Հրէից ազգին և
թշնամեաց նոցա պատուհասիւք և ահարկու
դատաստանաւ, կամ սփոփեն զեկեղեցին՝ խոս-
տանալով նմա զազատութիւն 'ի լծոյ և 'ի
փորձանաց, և զփրկութիւն համօրէն ազգի
մարդկան ձեռամբ Մեսիային, զորոյ զգալստեանէ
պուշակեցին։ Որոց յայտմանէ բացայայտեն զար-

ժանայիշատակ անցս այսր շրջանի և գիրք թագաւորութեանց, և երկու գիրք Ճեայորդաց կամ ազգաբանութեան, յորս Ճառին հիմնադրութիւք իսրայելացւոց թագաւորութեան, բաժանումն նորին, ապագայ հանգամանքն, և հուսկ ուրեմն կործանումն նորին գերութեամբն բաբելացւոց։

ՀՐՃԱՆ ԵՐՐՈՐԴ։

'Ի գէրմանէն բաբելոնի մինչև 'ի ծնունդն Ճնի,

'ի 4902 ամէ մինչև 5508. ամ. 606.

§. 51.

Մարգարէք դանիէլ և եզեկիէլ։ դանիէլ. ա. բ.

Գերութիւնն բաբելացւոց ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ցրուումն ազգին հրէից ընդ երկիրս բաբելացւոց, որ տեւեաց զամս 70։ Սակայն օրէնքն հրէից կայր և Ճեայր յամբողջութեան իւրում. այնպէս զի և 'ի ժամանակս գերուեն երևեցան 'ի նոսա երկու մարգարէք, դանիէլ և եզեկիէլ։ Զառաջինն զփորձ շնորհաց մարգարէութեան պարգևելոց նմա 'ի հոգւոյն սրբոյ դանիէլ ցոյց պատմելով գերազս նաբուզոդոնոսորայ, և վասն հեզութեան, մաքրմութեան և ճշմարտութեան մեծարեցաւ յոյժ յարքայից բաբելացւոց։ Եւ առաւել ևս յարգեցաւ դանիէլ 'ի նոցանէ զկնի հրաշիւք ազատելոյ զնա Աստուծոյ 'ի ժանեաց առիւծուց 'ի գբի անդ, ուր անկեալն էր մատնութեամբ

թշնամեայ, սակայն դաւանելոյն նորա զմի միայն զՀշմարիտն Աստուած յաւուրսն յայնոսիկ, յորս խորամանկ խրատիւք թշնամեայ դանիէլի արգելեալ էր բնակչայն բաբելոնի վերառաքել առ Աստուած զաղօթս, այլ հրամայեալ էր զամենայն ինչ խնդրել 'ի միայնոյ յարքայէն։ Եղեկիէլ նմանապէս 'ի հինգերորդ ամի գերուէ իւրոյ սկիզբն արար մարգարէանալոյ։

§. 52.

Ազատութիւն հրէից 'ի գերութենէ։ Եւայ. Գ. 28. ամ Ցի. 4972.

Երկերիւր ամօք յառաջ արդէն նախաձայնեալ էր բերանով մարգարէին Եսայեայ թէ Կիւրոս աղատեսցէ զհրէայս 'ի գերութենէ։ Զօրաբաբէլ դարձոյց զնոսա 'ի հայրենի երկիրս իւրեանց. և յառաջնում ամի շինեաց անդ զսեղան յորոյ վերայ մատուցան պատարագք Աստուծոյ։ Յամին երկրորդի սկիզբն եղև հիմնարկութեան տաճարին Երուսաղեմայ, որոյ կառուցման թէպէտ բաղումս արգել լինէին սամարացիք, որոց օրէնքն բաղկացեալ յօրինաց հրէից և հեթանոսաց յոյժ զօրացաւ 'ի պաղեստին 'ի ժամանակս գերութեան բաբելացւոց, սակայն ոչ հայելով յայս ամենայն արգելանս 'ի կատար եհաս հուսկ ուրեմն կանգնումն տաճարին։

§ • 53 •

Նորոգումն երուսաղէմայ։ ամս ՃԾ։ 5051 • Եռեալ • Գիրք Նեեմայ •

Զկնի այսորիկ քահանայն եզրաս և տակառապետն արքային պարսից արտաքսերքսայ նեեմի բազումս աշխատ եղեն կրկին բարեկարգել զաստուածպաշտութիւն ժողովրդեան, զքաղաքական կարգաղրութիւնս և կամ զքաղաքն Երուսաղէմ • զի ունէին առ այն զլիակատար իշխանութիւն յարքայէն պարսից։ Զայսու ժամանակաւ մարգարէանայր զաքարիա զմտանելոյն Քրիստոսի յերուսաղէմ (զԼ • թ)• և զերեսուն արծաթիցն, որով պարտ էր քսի վաճառիլ• (զԼ • ժա)։ Բայց 'ի զաքարիայէ մարգարէանայր և սանգէաս, որ յորդոր մատուցանէր ազգին 'ի զլուխ հանել զկառուցումն տաճարին • և Մաղաքիա, որ նախագուշակեաց զգալուստ մեսսիայի (զԼ • 3 և 4)• որ հաւատեաւ կեայր արդեօք առ յետին ժամանակօք նեեմեայ։ Սա է վերջին 'ի մարգարէից, որոյ նախաձայնութիւնք հասին առ մեզ յաստուածաշունչ գիրս։

§ • 54 •

Երրորդ էզրասայ և Նեեմայ։

Առ՝ յաւիտեանս ժամանակայ անմոռաց կացցէ յեկեղեցւոջ վերոյիշեալ քահանայն Եզրաս • քանզի սա գրեաց զչորեսին գիրս Թագաւորաց, զերկուս գիրս Ճեայորդաց • և զգիրս Եզրասայ և Եսթերայ • յորոց յառաջնումն

պատմէ թէ լիբը վարէը նա 'ի ժամանակի կա-
ռուցման տաճարին և բարեկարգութեան քա-
ղաքին. Իսկ յերկրորդում թէ լիւ Նոսթեր ե-
ղև թագուհի և զիաբդ ազատեաց զազգն 'ի
կորստական նենգութեանց Ամոնայ. յոր զայսու
ժամանակաւ հայէին հրէայք իբր 'ի թշնամի
իւրեանց առ արքային պարսից։ Զայսմ Նգ-
բասայ ասեն և ս ժողովել զամենայն մատեանս
հին օրինաց։ Իսկ նեէմի որպէս իշխան հրէից,
յորդորէը զազգակիցս խրատու և օրինակաւ
անձին իւրոյ յաստուածպաշտութիւն և 'ի
բարի վարս, որով և արժանի գտաւ պանծալի
անուան առն արդարոյ։ Պարտապանաց իւրոյ՝
որ 'ի համայնատարած չքաւորութեան անդ
ոչ մարթանային կերակրել զանձինս, ոչ ինքն
միայն թողոյր զպարտս, այլ և այլոց փարթամ
ունչատանց առ այն յորդոր լինէր։ Զմասն
հարստութեան իւրոյ բաժանէր աղքատաց. և
յարծաթասիրութենէ անտի սիրտ նորա հեռի էր
ամենայնիւ։

§. 55.

Տաճարապետ էհէզէյեանց. Ներքինանուն Աղոռա-
ծաշնչի 'ի յոյն.

Յետ մահուան նեէմայ՝ քահանայապետքն
յանհնարին վիշտս եկեղեցւոյն էին և ս իշխանք
թագաւորութեան, թէպէտ ընդ հրամանաւ
արքայից պարսից։ Հպարտութիւն նոցա զոյգ
ընդ արծաթասիրութեան եղև պատճառ օրէ յօր
բազմանալոյ հեթանոսաց 'ի նոյն իսկ յԵրուսա-

ղէմ. յորժամ մեծն աղէքսանդր հիմն 'ի վեր տապալէր զտէրութիւն պարսից. և հաստատեալն սովիմբ միապետութիւն յունաց յետ մահուանն նորին 'ի մասունս փեռևկտէր. յայնժամ հրէայք մեծի տանջանաց վիճակեցան 'ի ձեռաց արքայից ասորւոց և եգիպտացւոց, և մանաւանդ յեգիպտականէն պտղոմեայ լաղ կոչեցելոյ. որ գերեալ տարաւ 'ի նոցանէ յեգիպտոս արս հարիւր հազար։ Փոխանորդ սորա Պտղոմէոս եղբայրասէր 'ի քահանայապետութեան եղիազարայ հրամայեաց եօթանասուն թարգմանչաց փոխել զԱստուածաշունչն 'ի յոյն վասն գրատանն Աղէքսանդրիոյ։

§. 56.

Մահաբէայեկ կանգնողք ճշմարիտ Աստուածպաշտութեան։ ամք ՃԼ. 5341.

Թէպէտ երկիցս նուաճեալ էր Երուսաղէմ բռնութեամբն անտիոքայ արքային ասորւոց և տաճարն նորին դարձուցեալ 'ի մեհեան կռոց, և թէպէտ հրաման 'ի վերայ կայր մուծանել զհեթանոսութիւն 'ի մէջ հրէից, զոր և օգնութեամբ յոսովնի և մենեղաւոսի անօրէն պաշտօնէից ոչինչ դժուարին երևէր 'ի կատար հասուցանել. սակայն և այնպէս ոչ ամենևիմբ բարձեալ տեսանէր 'ի հրէից ճշմարիտն Աստուածպաշտութիւն. քանզի մատաթիէ շմաւոն քահանայն հրէից, յորմէ ծնաւ մակաբէ և որդի նորին յուդայ մակաբէ, վերստին մուծին նոքոդեցին զնոյն յերուսաղէմ։ Յաւուրս

յայսոսիկ կառուցաւ Յերուսաղէմ նոր ի մեծ դա-
տաստանատուն, անուանեալ Սինեդրիոն. սոյնպէս
և հրէայ ոմն աքսորեալ 'ի քահանայէն Յոնիայ
կանգնեաց զտաճար 'ի քաղաքին հելիոպոլիս,
վասն հրէից բնակելոց յեգիպտոս։

§. 57.

Հերձուածք ասորոց և փարիսեցւոց.

Մինչդեռ հրէայք մնացեալ կային յայսպիսի
վիճակի, երևեցան հերձուածք կամ աղանդք
սադուկեցւոց և փարիսեցւոց, և 'ի միջի սոցա
գիտունք կամ դպիրք։ Սադեկ, յորմէ կոչեցան
Սադուկեցիք՝ ուրանայր զամենայն պատիժս և
զվարձս հանդերձեալ կենաց. ջնդունէր զյա-
րութիւն մեռելոց և զնոյն իսկ զնախախնամութի
աստուածային։ Փարիսեցիք թէպէտ երևէին
արտաքուստ յոյժ բարեպաշտ, սակայն 'ի ներ-
քուստ էին առաջին անօրէնք այնր դարու։
Յորժամ սք բարիս առնէին ումեք, զլխաւոր
նպատակն էր ցուցանել զանձինս այլոց, զի այլք
գովեսցեն զնոսա. զողորմութիւն տային յայնպի-
սի տեղիս, ուր ժողովեալ լինէր բազմութիւն
աղքատաց, զորս և ստիպէին քարոզել ամենե-
ցուն զայն։ Զաղօթս մատուցանէին 'ի հրա-
պարակս կամ 'ի փողոցս, ընդ որս անցանէին
բազմութիւնք ժողովրդոց. և ինքեանք անդա-
դար վարդապետելով զառաքինութիւն և զճշ-
մարտութիւն, մեծամեծ անօրէնութիւնս գոր-
ծէին յափշտակելով զինչս որբոց և այրեաց

խաբէութեամբ զայնս ինքեանց սեփհականելով։ Մինով բանիւ՝ սոքա էին անաստուած կեղծաւորք, զորոց ընթեռնումք 'ի բաղում տեղիս սուրբ գրոց, յորս Քրիստոս յանդիմանէ և զամօթի հարկանէ զկեղծաւորութիւնս և զմեզս նոցա։ Այսպիսի էր ահաւիճակ եկեղեցւոյն հրէից 'ի ժամանակի ծննդեան քում։ Իսկ այլ ճեացեալ ազինք երկրի ընկզմեալ կային 'ի խորս թանձրամած կռապաշտութեան։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ։

'Ի ծննդենէ Քրիստոսի 'ի ժամանակս մեր։

§. 58.

Ծնունդ Քրիստոսի. գլուխ. Ա.

Քրիստոս փրկիչն մեր ծնաւ 'ի կուսէն Մարիամայ գերբնական ներգործութեամբ Հոգւոյն սրբոյ յամի ծի 5508. 'ի բեթղեհէմ քաղաքի, 'ի նոյն ժամանակի և 'ի նոյն իսկ տեղւոջ, զորոց նախագուշակեալ էին 'ի սկզբանէ մարգարէք։ Զ ծնունդ նորա հրաշափառապէս բարեբանեցին յերգս օրհնութեան ողջոյն դասք երկնաւոր հրեշտակաց, որ լսելի եղև 'ի մթութեան այնր գիշերի, որպէս պատմաբանէ սուրբ Աւետարանիչն։ Եւ այս իսկ էր նշան սրբութեան մանկանն քում յաչս Աստուծոյ. ըստ որում նո-

վաւ կատարելոց էին ամենամեծ գործք փրկականք. քանզի չէր երբէք լսելի լեալ ուրեք լիջուն հրեշտակաց 'ի խորանաց երկնից յաւետել զծնունդ մանկան ուրուք. և երգել նմա զերգս փառաբանութեան։ Յութերորդ աւուր թլփատեցաւ մանուկն ըստ օրինաց հրէից. և կոչեցաւ Յիսուս՝ որ է փրկիչ. իսկ 'ի լնուլ քառասուն աւուրց մայր նորա և խօսեցեալն նմին այրն յովսէփ բերին զնա 'ի տաճար անդ և ընծայեցին Տեառն։

§. 59.

Փախուստն Հոգի յԵգիպտոս. Տաճար. Է.

Յետ ծննդեանն Քրիստի, մոգք տեսեալ զնոր աստղն ծննդեան նոր, եկին յարևելից յերուսաղէմ և անտի 'ի բեթղեհէմ երկրպագանել Քրիստի։ Հերովդէս արքայն հրէից ծանուցեալ յուսուցչաց օրինաց թէ Մեսիայի, որում նախ գուշակեալ էր լինել արքայ իսրայէլացւոց, պարտ է ծնանիլ 'ի բեթղեհէմ, խորհեցաւ սպանանել զՅիսուս, երկուցեալ զի մի մանուկն յետ զարգանալոյն զրկեսցէ զնա յաթոռոյն. այլ յայսմ միջոցի ծնողքն Յիսուսի փախեան ընդ նմա յԵգիպտոս, ուստի զկնի մահուան Հերովդէսի, հրաման էառ Յովսէփ կրկին վերադառնալ յերկիրն իսրայէլացւոց, յոր եկեալ բնակեցաւ 'ի Նազարէթ։

§ 60.

Լաւանին հէնոց Քրիստոսի 'ի Տանիսուէն։

Զ մանկուէ Քրիստոսի զայն միայն գիտեմք ստուգիւ, թէ նա 'ի մատաղ հասակի իւրում էր յոյժ հեզ, խոհեմ և առ օգտաւէտ ուսմունս կաբի ջանասէր։ Յերկոտասանեարորդ ամի հասակին եղոյց արդէն զիմաստուն իւր. քանզի յորժամ 'ի տաճարի անդ 'ի միջի նշանաւոր վարդապետաց առանձին ի մատադրուէ ունկն մատուցանէր ուսմանց նոցա, առաջի առնելով նոցա զզանազան խնդիրս և խօսակից լինելով ընդ նոսա զիրաց, զորոց այլ չափահասք նմին հազիւ ուրեմն ճանաչմունս ինչ ունէին, զամենեսին առ հասարակ՝ ոչք անդ կային, 'ի զարմանս կրթէր։ Քրիստոս միշտ պատուէր զծնողս իւր, հնազանդէր նց որդեակն խոնարհուէ, և օր աւուր զարգանայր յուսմունս և յառաքինութիս։ Հասեալ 'ի տիս երիտասարդուէ կեայր 'ի Նազարէթ 'ի միայնուէ և յանյայտուէ. մինչև ցայն ժամանակ, յորում եղոյց զանձն իւր իբրև վարդապետ և փրկիչ առաքեալ վասազատուէ ազգի մարդկան։

§ 61.

Մկրտիչն Քրիստոսի 'ի Յովհաննէ։

Յորժամ էր Քրիստոս արդէն 'ի հասակի քառասան և վեց ամաց, յայնժամ այր ոմն բարեպաշտանուանեալ Յովհաննէս, սկսաւ ճշմարիտն ազդեցուէ յորդորել զժողովուրդն յուղղուէ վարուց։ Սա քարոզէր թէ խոստացեալ Մեսսիայն Քրիս-

տոս երևեսցի փուլթով վասն փրկուեմ մարդկան, և ամ որ կամի արժանաւոր երևիլ առաջի նորա, պարտի յանձին բերել զՀշմարիտ բարեպաշտուն։ Բազումք հետևեցան այսց խրատուց և մկրտեցան 'ի նմանէ 'ի գետն Յորդանան առ 'ի ցուցանել այնու զյօժարուն իւրեանց լինել որդի եկեղեցւոյ խոստացելոյն Մեսիայի, որ էր պատրաստուն ի մն առ այն մկրտուն, զոր յետ ժամանակաց Քրիստոս հաստատեաց յեկեղեցւոջ իւրում։ Սակայն մկրտուն, զոր կատարէր Յովհաննէս, այնու պանծալի ևս ցուցաւ, զի ինքն Քրիստոս յերեսնամեայ հասակի եկն մկրտիլ 'ի նմանէ. յայնժամ լսելի եղև ձայն յերկնից՝ որ գոչէր ,, դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։ Այսու առաւել ևս հաստատեցաւ Յովհաննէս 'ի հաւատս իւր թէ Քրիստոս է տէր և փրկիչ աշխարհի։ Յետ մկրտուեն վաղվաղակի գնաց Քրիստոս յանապատ, զի 'ի միայնուեն անդ առանց իրիք արգելանաց պատրաստեսցի առ այն մեծամեծ գործս փրկագործուեն, զորս սկսեալն էր, և զոր ունէր կատարել առ 'ի դարձուցանել զազգ մարդկան 'ի Ճանապարհս փրկուեն և ազատել 'ի սկզբնածին մեղաց։ Յանապատէ միւսանգամ դարձաւ 'ի գետն Յորդանան առ Յովհաննէս, յորում միջոցի երկուք յաշակերտաց Յովհաննու և ապա փիլիպոս և Նաթանայէլ յարեցան առ նա վասն երկնառաք ուսման նոր։ Քրիստոս տարաւ զնս ընդ իւր 'ի կողմանս գալիլեացւոց, ուր 'ի քաղաքին Կանայ գործեաց զառաջին հրաշս, զջուրն փոխելով 'ի գինի. յետ այ-

սորիկ տեղի բնակուէ իւրոյ ընտրեաց նա զկա-
փառնայում ։

§ 62.

Լաւագոյն ամ քարոզուէ իւրոյ. Յովհան. Է.

Յառաջին ամի քարոզուէ իւրոյ՝ գնաց Քրիստոս
Յերուսաղէմ 'ի տօնի զատկին, և տեսեալ ընդ
զի անպատիւ առնեն զտաճարն ան և գործեն
'ի նմա զգործս անվայելս, մինչ համարել զեկե-
ղեցին վաճառատեղի ինչ և ժողով մեղաւորաց,
արտաքս եհան անտի զամենեսեան, որ անկարգուէ
խօսէին, հաստատեաց զիշխանուէ իւր զառ 'ի հօ-
րէ՝ դարձուցանել զժողովուրդն յանարգելոյ ըզ
սրբուէն, և ածել 'ի ճշմարիտ երկրպագուի նո-
ին։ Յայսմ ժամանակի բնակիչք բազում տեղ-
եաց ընդ որս անցանէր Քրիստոս, յոյժ սիրեցին
զնա, յորոց միջի էր և Նիկոդեմոս այր երևելի,
որ եկն առ Յիսուս 'ի գիշերի խօսել ընդ նմա
զարքայուէ երկնից, և ուսանիլ զեղանակն արժա
նանալոյ այնմ։ Յերուսաղեմէ գնաց Յիսուս ա-
շակերտաքն հանդերձ 'ի զանազան գաւառս երկ-
րին հրէաստանի ուսուցանելով ամ ուրեք։ 'Ի
գալ ձմռան վերստին էլ 'ի գալիլիա, և 'ի ճա-
նապարհի անդ խօսեցաւ ընդ սամարացի կնոջն,
զիարդ պարտ է ճշմարտուէ երկրպագանել Աս-
տուծոյ և զգալստենէ Մեսիային. որով և բազ-
մացաւ թիւ հետևողաց նորա։ Բայց 'ի նա-
զարէթ ընդ հակառակն բնակիչք փոխանակ
ուղղելոյ զվարս իւրեանց վարդապետուէ Քրիս-
տոսի՝ դաւէին զկեանս նոր։ Անտի գնաց Յիսուս

'ի կափառնայում, ուր բժշկեաց զորդի հա-
բիւրապետի ուրուն. իսկ 'ի քաղաքն գալիլեայ-
ւոց բժշկեաց զբորոտ մի անդամալոյծ։ Ու-
սուցանելով զժողովուրդն և գործելով հրաշս
'ի փրկուել ախտացելոց՝ ամ ուրեք պատուեալ
եղև մեծաւ յարգանօք. միայն փարիսեցիք նա-
խանձէին ընդ Քրիստոս և խօսէին զնմանէ բա-
զում բանս հայհոյանաց։

§ 63.

Երկրորդ ամ քարոզութեան. յոհ. գ.

Յերկրորդում ամի քարոզութեան իւրոյ դարձեալ
միւսանգամ ել Յիսուս 'ի տօնն զատկի, ուր և
յաւուր շաբաթու բժշկեաց զանդամալոյծ մի
առ պրոպատիկէ աւազանին։ Յետ քանի մի ա-
ւուրց կրկին դարձաւ 'ի գալիլիա և ուսոյց 'ի
կափառնայում 'ի հրապարակի անդ 'ի միւս ա-
ւուր շաբաթու. և բժշկեաց զորուն տջ ձեռն
գօսացեալ և այնու եցոյց փարիսեցւոց, թէ գործ
բարի հրամայեալ է գործել և 'ի շաբաթու, որ
բարի գործով առաւել ևս սրբի։ Այսու այնչափ
գրգռեցն փարիսեցիք և դպիրք, մինչ 'ի մտի եդին
սպանանել զՔն։ Այլ նա բազմուք ժողովը-
դեան գնաց 'ի մերձակայ լեառն ինչ և անդ
պատրաստեալ զինքն աղօթիւք, յերկրորդում
աւուր ընտրեաց հրապարակաւ զերկոտասան աշա-
կերտս, զորս և առաքեալս անուանեաց։ Յիջա-
նելն 'ի լեռնէ անտի բժշկեաց զամ հիւանդս,
զորս մատուցին նմա, և ուսուցանէր զաշակերտս
իւր և զայլ ունկնդիրս պանծալի քարոզուքք

իւրովք, զոր առաջի առնէ մեզ աւետարանիչն Մատթէոս 'ի գլ. Ե=Է.

§ 64.

Ղ-Հ. Է.

Ասի միւսանգամ գնայ Յիսուս 'ի կափառնայում, ուր բժշկեայ զՀեթանոսի ուրուն հարիւրապետի զծառայ, որ անկեալ կայր մերձ 'ի մահ։ Իսկ 'ի նային յարոյց զմեռեալ որդի ուրումն այրւոյ։ Ապա շրջեալ և ևս ընդ այն կողմանս քարոզէր զաւետարանն։ Զկնի այսպիսի վարդապետութեանն իւրոյ և բազում հիւանդայ բժշկութեանն, 'ի մտի եդ Յիսուս անցանել յայնկոյս լճին գալիլիացւոց. այլ մինչ ննջէր 'ի նաւին, յարեաւ հողմ և մրրիկ սաստիկ։ Զահի հարեալ աշակերտքն զարթուցին զքո՝ խնդրելով 'ի նմանէ զօգնութի, որ միով ճոճային բանիւն խաղաղացոյց զմրրիկն։ Յետ այսորիկ ել 'ի նաւէն յերկիրն գերգեսացւոց, բժշկեայ մեծաւ հրաշիւք զանտանելի ցաւս, յարոյց զմեռեալ դուստր Յայրոսի. եբաց զաչս երկուց կուրաց, ոչք գնային զհետ նը՝ 'ի դառնալն 'ի նազարեթէ և խնդրէին 'ի նմանէ զօգնութի. նոյնպէս ևս ետ համբր միում խօսել, և օգնէր ամենեցուն առ հասարակ ցուցանելով զմեծ զթութի իւր։ Անցեալ ընդ քաղաքս գալիլիացւոց առաքեաց զերկոտասան աշակերտս իւր 'ի զանազան տեղիս քարոզել զաւետարանն. որ և դարձան առ նա սակաւուք յառաջ քան զպատէքն։ Յայսմ ժամանակի գլխատեցաւ և յովհաննէս մկրտիչ ըստ հրամանին հերովդիսի։

§ 65 ·

Յովհ · Ղ ·

Յայնժամ ելթող Յիսուս զերկիրն, որում տիրէր Հերովդէս, և գնաց յանապատն բեթսայիդայ, 'ի դաւառ եղբօրն Հերովդի Փիլիպպիայ ։ Անդ յաղեցոյց նա զհինգ հազար ոգիս հինգ նկանակաւ և երկու ձկամբ · այնպէս զի և զնշխարեալ կոտորս բարձին երկոտասան սակառի լի ։ 'Ի ժամանակի յայսմիկ լքան 'ի նմանէ 'ի կափառնայուն ոմանք 'ի հետևողաց նորա· վա զի խոստացաւ նոցա ոչ զժամանակեայ կամ զերկրաւոր բարուլիս, այլ զերկնայինս և զյաւիտենականս ։ Առաքեալք երդնուին նմա 'ի հաստատ հաւատարմուլի իւրեանց · այլ նա յառաջադոյն յայտնեաց նոցա, թէ մի ոմն 'ի նոցանէ մատնելոց է զնա ։

§ 66 ·

Եբրայեցոց առ Յարոզութեան Քրիստոսի · Տասն · ԺԷ ·

Յերրորդում ամի քարոզուեր իւրոյ Քրիստոս ոչ էր յերուսաղէմ յաւուրս զատկի · այլ գնացեալ էր 'ի Ծովեղերս տիւրոսի և սիդոնի, ուր կինն քանանացի աղաչէր զնա բժշկել զդուստրն իւր ։ Լուաւ Քրիստոս աղաչանաց նորա և զովեաց ըզհաւատն ասելով ,, կին դու մեծ են հաւատք քո, եղիցի քեզ ոգի և կամիս ։ Որով գնացեալ նորա 'ի տուն իւր եգիտ զդուստրն իւր ողջացեալ ։ Ապա 'ի կողմանս տասն քաղաքաց մերձ առ լիճն գալիլիայ բժշկեաց զբազում կաղս, կոյրս, համրս

և զայլ հիւանդս։ Աստանօր կերակրեայ եօթն հացիւք և սակաւ ձկամբք զչորս հազար արս, թող զկանայս և զմանկտիս նոցա։ Ի բեթսա-յիդայ եբաց զաչս կուրի, և ի քաղաքին փիլիպ-պեայ կեսարիոյ վկայեաց զինքեանէ կրկին անգամ առաջի աշակերտաց իւրոց թէ նա է խոստացեալ փրկիչն ազգի մարդկան և կանխաւ յայտնեաց նոցա զչարչարանս, զմահ և զերեքօրեայ յարութիւն։

§ 67.

Այլակերպութիւն Քրիստոսի. զկ. Ի.

Յետ այսորիկ առեալ ընդ իւր զպետրոս, զյակովբոս և զյովհաննէս գնաց ի գալիլեացւոց լեառն ի թափոր. ուրանօր երեքին աշակերտքդ տեսին զերեսս Յիսուսի լուսաւորեալ իբրև զարեգակն և զհանդերձս նորա սպիտակ իբրև զձիւն, յորում վայրի լսելի եղև նոցա ձայն յերկնից, որ ասէր ,, Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք։ Հրաշալի յայտնութիւնս այս կոչի այլակերպութիւն Քրիստոսի։ Ի դառնալն իւրում անտի յերուսաղէմ միւս անգամ դուշակեաց զառաջիկայ չարչարանսն և զմահն. հատոյց՝ ի կափառնայում զերկդրամեանն հարկ, կամելով անձամբ իւրով տալ զօրինակ հնազանդելոյ թագաւորական իշխանուէ, յանդիմանեաց զաշակերտս իւր վասն վիճելոյ նոցա զառաջնութենէ, և յորդորեաց զնս լինել հեզ և միաբան որպէս եղբարք։ Զկնի ժամանակաց ինչ գնաց յերուսաղէմ ի տօնն տաղաւարահարաց, զոր սահ-

մանեցին հրէայք 'ի յիշատակ քառասնամեայ ճանապարհորդուն իւրեանց յանապատս. և ուստի 'ի տաճարի թէ առաքեալ է Աստուծոյ։ Գրգռեալք այսու հրէայք կամէին արկանել զնա 'ի բանտ. Նիկոդեմոս ընդդէմ եկայ նոցա։ Միւսանգամ ևս կամէին քարկոծ առնել զնա, այլ Քրիստոս գաղտնի ելեալ 'ի տաճարէն՝ հեռացաւ յերուսաղէմ. և անցեալ ընդ սամարիա, ընտրեաց ևս զԵռնատուն աշակերտս և առաքեաց զնոսա 'ի զանազան կողմանս քարոզել զվարդապետութիւն իւր։

§ 68.

Ղ-Ի. ԺԴ.

Մերձ էր չորրորդ տօն պասեքի, և Յիսուս գնայ յերուսաղէմ։ 'Ի տան իշխանի ուրուճն փարիսեցւոյ, առ որում էր յաւուր շաբաթու, Բ Ը ժշկեաց զՋրդողեալն։ Աշակերտայ իւրոց և հետևողայ պատուիրեաց լինել անյողդողդ 'ի գործս, համբերող և հպատատուն 'ի քարոզութիւն և 'ի կատարման վարդապետութեան իւրոյ։ Յառակի անդ վասն տնտեսին և մեծատան, անարգեաց զարծաթասիրութիւն և զերկրային շռայլութիւն գովելով միանգամայն զգթութիւն և զկարեկցութիւն առ աղքատս։ 'Ի վերջին ճանապարհիս յայսմիկ արար ևս զբազում մեծամեծ հրաշս ըստ սիրոյ և ըստ գթութեան իւրում, Բ ժշկեաց տասն բորոտս, յորոյ մին միայն գոհ եղև զնմանէ։ 'Ի Բեթանիա յարոյց զղազարոս զչորեքօրեայ մեռեալն 'ի գերեզմանէն։ Հրաշագործութիւնս այս ամենակարողութեան Քրիստոսի դար,

ձոյց առ նա զմիտս ամենեցուն. հրէայք յօրէս 'ի վեր առաւել ևս սկսան դարան դրեալ, փոյթ 'ի մէջ առնուին սպանանել զԲրիստոս. այլ քանզի ժամանակ մահուան Քրիստոսի չէր ևս հասեալ՝ գնաց նա յեփրայիմ։ 'Ի Ճանապարհին յայտնեաց զանձն իւր մանկանց մատուցելոց նմա խանտաղատանօք և քաղցրութիւն. հարուստ պատանւոյ ումեք եցոյց զՃանապարհն յաւիտենական կեանց. և աշակերտաց իւրոց և այլոց ունկնդրաց ուսոյց առակաւ վարձկանաց այգւոյն մի նախանձիլ ընդ երջանկութիւն այլոց։

§ 69.

Ղուկ. ԺԸ.

Մերձեցաւ տօն զատկի, և Յիսուս դարձաւ կրկին անգամ յեփրայիմայ յերուսաղէմ։ Ո՛չ հեռի յերիքովէ եբաց զաչս կուրին, որ նստէր առ Ճանապարհաւն. 'ի քաղաքն երիքով եմուտ 'ի տուն զաքէի, և ուսոյց զեղեալս անտանօր խրատիւք և առակօք։ Յելանելն յերիքովէ եբաց դարձեալ զաչս երկուց աղքատ կուրաց, որք յանցս Ճանապարհի նստեալ՝ ողորմութիւն խնդրէին։ Մերձեցեալ յերուսաղէմ եկաց զանօրէնութիւն քաղաքին և զապագայ կործանումն նորին, ապա եմուտ անդ մեծահանդէս շքով և պատուով ամ ժողովրդեան։ Յերեկոյեան ժամու նոյն աւուր գնաց 'ի բեթանիա, յերկրորդ աւուր, որ էր երկու շաբաթի, դարձաւ միւսանգամ յերուսաղէմ, և արտաքս եհան 'ի տաճարէ զվաճառողս. յերեքշաբաթի աւուր կրկին եկն 'ի տա-

Հարն և քարոզեաց զզանազան փրկաւէտ վարդապետուէիս և զյարուն մեռելոց և մարգարէացաւ զկործանմանէ քաղաքին Երուսաղէմի, յորդորեաց զամենեսին ունել զանկեղծ սէր առ ՅԾ, ոչ զառաջին և գլխաւոր պատուիրան և յետ այնորիկ զսէր առ ընկերս. ուստոյ հետևողաց իւրոց լինել միշտ զուարթ և ժուժկալ. փախչիլ յամբարէ և յարիլ 'ի բարին, առանց որոյ ոչ ոք կարէ վայելել զկեանս յաւիտենականս. Զսոյն զայս քարոզեաց նաև յայտնապէս առակօք, որ զտասն կուսանաց և զզանազան քանքարաց յանձնելոց ծառայից. և հուսկ ուրեմն պայծառ նկարագրութ առաջի արար զզանձալի գալուստս իւր 'ի վերջին աւուրս աշխարհի։

§ 70.

Յուղ. ԺԳ. 1—30.

'Ի չորեքշաբաթի ճնաց Փրկիչն 'ի բեթանիա և խօսէր ընդ աշակերտս իւր։ 'Ի հինգշաբաթի առաքեաց զՊետրոս և զյովհաննէս պատրաստել զպասէքն։ Յերեկոյին ասաց Յիսուս աշակերտաց իւրոց զզանազան գորովալի և զմխիթարական բանս, որովք զվերջին ողջոյն իւր տայր նոցա։ Նախ քան զընթրիսն լուաց զոտս աշակերտաց և ետ նոցա զօրինակ փոխադարձ սիրոյ և խոնարհութեան։ Զկնի ընթրեացն յայտնապէս ծանոյց թէ յուդաս մատնելոց է զնա. զի աշակերտս այս անհաւատարիմ՝ խոստացեալ էր քահանայապետին հրէից վաճառել զնա ընդ 30 արծաթոց։ 'Ի վերջին ընթրիս յայս սահմա-

նեաց Քրիստոս և զսէր հաղորդուլին, յորդորեաց զաշակերտս իւր 'ի փոխադարձ առ միմեանս սէր, և նախագուշակեաց պետրոսի զուրացումն նորա։ Ասաց և աշակերտաց իւրոց զմխիթարական բանս, զորս աւարտեաց աղօթիւք և գնաց 'ի գիշերին ընդ աշակերտս իւր 'ի լեառն ձիթենեաց։ Մերձ 'ի գեօղն գեթսեմանի եմուտ 'ի պարտէզ անդր, և աղօթեաց մեկուսի յաշակերտաց իւրոց. որք 'ի քուն էին մտեալ յայնմ ժամու։ Զկէս գիշերաւ եկն յուդայ զօրօք հռովմէացւոց և խմբով պաշտօնէից դատաւորացն հրէից. և համբուրեալ զՔրիստոս, ետ այնու զնշան մատնուեր, ոչ խոստացեալն էր առնել։ Հեշտեաւ կարող էր թէպէտ աստանօր Քրիստոս խորտակել զյանդգնութիւն մոլեգնելոցս այսոցիկ, որք միով բանիւ նը՝ էն՝ յերկիր անկան ամենեքեան, սակայն նա հեղուլ թոյլ ետ նց ունել զինքն. և նախատեաց զպետրոս վ՚ հատանելոյն զունկն ծառայի ուրումն մաղքոսի, և ասաց թէ զարտ է ըմպել նմա զբաժակն, զոր հայր իւր պատրաստեալ է վ՚ նորա։ Կապեցին զՔրիստոս զօրականքն առաքեալք ընդդէմ նը՝, և տարան զնա միայն զթողեալն յաշակերտացն իւրոց, նախ՝ առ յառաջագոյն եղեալ քահանայապետն Աննայ, և ապա առ քահանայապետն Կայիափայ, առ որ ժողովեալ էին յայնժամ գերագոյն խորհրդականքն։ Աստանօր յայտնեաց Յիսուս թէ՝ նա է խոստացեալն Քրիստոս և որդին Աստուծոյ, որոյ վ՚ և խորհրդականքն միաձայն դատապարտեցին զնա 'ի մահ. և յետ

այսորիկ գան հարեալ չարաչար տանջեցին զնա։ Ապա ետուն զնա սուտ վկայուքք 'ի ձեռս պե-
ղատոսի տեղակալին հռովմայեցւոց, զի հաստա-
տեսցէ նա և կատարեսցէ զվճիռ իւրեանց։ Տե-
սեալ զայս Յուդայի զղջացաւ և 'ի յուսահա-
տուէն գնաց անդէն խեղդեցաւ։ Պեղատոս ոչ
ինչ մեղս գտեալ կամեցաւ արձակել զՅիսուս,
զնոյնն հաստատեայ առաջի ժողովրդեանն, և
եդ ընդ Քրիստոսի զբարաբբայ, կարծելով թէ
ժողովուրդն խնդրեսցէ արձակել զՅիսուս. քան-
զի սովորուն էր 'ի տօնի զատկի արձակել զկա-
պեալ ոք. այլ ժողովուրդն աղաղակեաց ոչ զդա,
այլ զբարաբբայն արձակեա. վասն պիղատոս ետ
զՅիսուս գան հարկանել, և այսպէս արիւնա-
թաթախ առաջի արար դարձեալ ժողովրդեան,
կամելով շարժել զսիրտս նց 'ի կարեկցուն, և
երկիւղս վկայեաց թէ անպարտ գտանէ զՔրիս-
տոս. այլ ամ առաջարկուէք 'ի սանձահարել
զկատաղուն ժողովրդեան 'ի զուր ելին. ժողովն
անդադար աղաղակէր զի հրամայեսցէ 'ի խաչ
հանել զՔրիստոս։ Հուսկ ուրեմն յորժամ ա-
ղաղակն ժամէ 'ի ժամ բարձրանայր, եհատ վը-
ճիռ խաչել զքրիստոս. պիղատոս լուացեալ ըզ
ձեռս իւր առաջի ժողովրդեան, ասաց նոցա թէ
քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. ընդ
որ պատասխանի ետ ժողովուրդն և ասէ. արիւն
դորա 'ի վրայ մեր և 'ի վերայ որդւոց մերոց։

§ 71.

Խաչելութիւն Քրիստոսի. Մատթ. ԻԷ։ Ղուկ. ԻԳ։

Յետ այսորիկ տարան զՅիսուս 'ի լեառն գող-

գոթայ և խաչեցին 'ի մէջ երկուց աւազակաց. այսպիսի պատիժ կարգեալ էր յայնժամ առ հռոմայեցիս վասն աւազակաց։ Քրիստոս 'ի մեծի տանջանս ասաց զբանս զայսոսիկ ,, ամ ինչ կատարեալ է ... Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. և ելեալ զհոգին։ Մի ոմն 'ի զինուորացս խոցեաց տիգաւ զկող նորա և բղխեաց անտի արիւն և ջուր։ Մահ փրկչին կատարեցաւ մեծամեծ նշանօք և հրաշիւք, քանզի արեգակն խաւարեցաւ 'ի մէջ բոլոր հրէաստանի զերիս ժամըս, ցելաւ վարագոյր տաճարին երուսաղէմի յեր կուս 'ի վերուստ մինչև 'ի վայր, և եղև սաստիկ երկրաշարժութիւն 'ի քաղաքին յայնմիկ։

§ 72.

Թաղումն Քրիստոսի, յովհ. ԺԹ։

Յովսէփ յարեմաթիայ քաղաքէ, որ էր միշտ թէպէտ և գաղտնի բարեկամ Յիսուսի, հրամայեաց էառ 'ի պիղատոսէ թաղել զմարմին Քրիստոսի։ Նիկոդեմոս օգնեաց նմա 'ի թաղման անդ՝ զոր կատարեցին մեծաւ պատուով։ Զ մարմինն Քրիստոսի օծին անուշահոտ իւղովք և պատեալ մաքուր կտաւով եդին 'ի նոր գերեզմանի, որ էր փորեալ 'ի վիմէ, 'ի պարտիզին Յովսեփայ որպէս նայն կամէր։ 'Ի դուռն գերեզմանին թաւալեցուցին զվէմ մի մեծ. ժողովն հրէից յայսանեաց յայնժամ պիղատոսի թէ Քրիստոս մարգարէն այր զերեքօրեայ յարուէ իւրմէ, որոյ վասն և խնդրեաց զի նա հրամայեսցէ պահպանել զգերեզ

մանն ցերրորդ օրն. զի մի աշակերտքն նը գողա-
նի գողացեալ զմարմինն ասասցեն՝ թէ Քրիստոս
վարդապետ իւրեանց յարեաւ 'ի մեռելոց։ Վասն
եւ նոցա պիղատոս զզօրականս, զորս առեալ նց
տարան և կնքեցին զվէմն. զի ոչ ոք կարասցէ մը
տանել 'ի նա գաղտնապէս, թէպէտ և խաբեսցէ
զպահապանս։

§ 73.

Յարութիւն Քրիստոսի. հատ. իբ։

Ցերրորդում աւուր յարեաւ Քրիստոս 'ի գե-
րեզմանէ։ Զահի հարեալ պահապանացն փա-
խեան անտի։ Յետ յարուցեալ Քրիստոս
բազում առաքինի արանց և բազմ՝ անգամ տրտ-
մեցելոց իւրոց աշակերտաց, զորս կացոյց նա
յայնժամ ուսուցիչս քրիստոնէական հաւատոյ,
հրամայելով նոցա քարոզել զվարդապետուն իւր
և մկրտել յանուն սրբոյ երրորդութեան։

§ 74.

Հոգեառն Քրիստոսի. գոյծ առաքելոց. ա։

'Ի քառասներորդում աւուր յետ յարուցեան ժո-
ղովեաց Քրիստոս զաշակերտս իւր 'ի բեթանիա.
խոստացաւ առաքել առ նոսա զՀոգին սուրբ,
որ հեղցէ 'ի վերայ նոցա զշնորհս իւր, և այնու
տայցէ նոցա զզօրուն կատարելոյ զառաքելական
պարտաւորութիս, և օրհնեալ զնոսա ասասնօր համ
բարձաւ յերկինս առաջի աչաց նոցա։

§ 75.

Տարածումն քրիստոնէական հաւատոյ.

Զկնի տասն աւուրց յետ համբարձմանն Քրի, էջ հոգին սբ 'ի վրայ առաքելոց, որով պատրաստեցան նք կատարել զպարտականութիւն իւրեանց, և ընկալան զշնորհս գործելոյ զքանչելիս և խօսելոյ 'ի զանազան լեզուս։ Պետրոս, որում աջակից եղև աւետարանիչն մարկոս, քարոզեաց զաւետարանն 'ի հրէաստան և յասորիս. յովհաննէս յանատոլիա. իսկ պօղոս՝ ընդ աւետարանչին զուկասաւ՝ 'ի հրէաստան, 'ի յունաստան, յիլլիրիա և յիտալիա։ Միւս առաքեալքն նմանապէս և եօթանասուն աշակերտքն Քրի, ջանային նովին փութով տարածել զաւետարանական հաւատն Քրիստոսի. և ամ առաքեալք տպաւորեցին զքարոզուն իւրեանց արեամբ և մահու. բաց 'ի միոյն յովհաննէ, որ յաքսորանս գոլով 'ի կղզւոջն պատմոս, գրեաց անդ զգիրս յայտնութեան. և վախճանեցաւ իւրով մահուամբ։ Թիւ եկեղեցեաց քրիստոնէից բազմացաւ. մին 'ի յոյժ ծաղկելոցն անտի էր յանտիոք, որ է յասորիս, հիմնեալ 'ի բառնաբայ։ Ընդամենն այսր եկեղեցւոյ զառաջինն կոչեցան յանուն Քրիստոսի՝ քրիստոնէայք։ Յերկրորդ դարուն յետ ծնընդեանն Քրիստոսի տարածեցաւ հաւատն քրիստոնէական 'ի գաղղիա, յիսպանիա, 'ի բրիտանիա և 'ի կողմանս ինչ գերմանիոյ. իսկ յերրորդում դարու յարաբիա։ Յայսոսիկ յամ տեղիս տարածեալ բնակէին քրիստոնեայք 'ի տանջանս և միշտ

կրէին զհալածանս։ Այլ յորժամ մեծն Կոս-
տանդիանոս ընկալաւ հրապարակաւ զդաւանու-
թիւն քրիստոնէական հաւատոց, քրիստոնէու-
թիւնն եղև անդ նախագահ. իսկ 'ի չորրորդ
դարուն քարոզեցաւ աւետարանն 'ի Հնդիկս,
Յաբիսինիա և Յիրլանտիա։ Զայսու ժամանա-
կաւ հաւատացին 'ի Քրիստոս և գոթացիք 'ի
պաննոնիա՝ 'ի դանիա և 'ի միսսիա. և 'ի վախ-
ճանի հինգերորդ դարուն փրանկք, որ և գաղ-
ղիացիք 'ի ժամանակի թագաւորուն արքային
իւրեանց Կլոդովիկայ. 'ի վեցերորդ դարուն
անգղիացիք 'ի բրիտանիա. իսկ յեօթներոր-
դում պաւարացիք, ֆրանքոնացիք, շվէտք, վէստ
ֆալացիք, նիտերլանտացիք և զվիցցերիք։ Սակ-
սոնացիք դարձան 'ի հաւատս Քրիստոսի 'ի ժա-
մանակս մեծին կարոլոսի։ Ապա 'ի սկիզբն ինն եր-
որդ դարուն տարածեցաւ կրօնն քրիստոնէա-
կան 'ի շվէտիա և 'ի տանիս, 'ի 826 ամի 'ի
բոհեմիա, 'ի մորավիա և 'ի լեհս. իսկ 'ի 867
ամին յերկիրն բուլղարաց և 'ի սերպիա։ Իսկ
վասն ռուսաստանի գիտելի է, զի բաց 'ի պատմաբա-
նէն եւսեբիայ, որ ասէ՝ թէ սրբոյ առաքելոյն
անդրէասի վիճակեցաւ քարոզել զաւետարանն 'ի
սկիւթիա, այն է՝ բնակչաց 'ի միջի տնէստր և
տնեբր գետոցն, գտանեմք և սմանք 'ի պատմուն,
թէ յառաջքան զգալուստն Իգորայ ընդ Օլգա-
յի 'ի կիէվ, 'ի 880 ամի կայր անդ եկեղեցի մի
քրիստոնէից և բազմուն հաւատացելոց։ Մեծ
դշխոյն օլգայ՝ կողակիցն մեծի իշխանին ռուսաց
Իկորայ մկրտեցաւ 'ի կոստանդինուպոլիս 'ի 955

ամի. այլ որդի նոր ավետաւոյլաւ և Թոռն եաբոբոլկ մեծ իշխանքն ռուսաց կային դեռ 'ի հեթանոսուն. մինչ հուսկ ուրեմն մեծ իշխանն վլադիմիր առաջին 'ի 988 ամի առաքեաց 'ի կոստանդինուպոլիս զդեսպանս, և խնդրեաց 'ի կայսերացն բարեղէ և 'ի կոստանդիանոսէ զդաստ եկեղեցական անձանց առ 'ի տարածել 'ի տէրուն իւրում զքիստոնէական հաւատս։ Եւ այսպէս մկրտեցաւ վլադիմիր ընդ երկոտասան որդւոց իւրոց, որոց օրինակաց հետեւեցան և ժողովուրդքն այնչափ բազմութեամբ, զի գետն պօչայնա եղև աւազան հազարաւոր ռուսաց։

Սա շինեաց զեկեղեցիս և զդպրոցս, հրամայեաց թարգմանել վա ազգին 'ի լեզու շկլաւոնացւոց գյունական ՝ՃԾաշունչն եօթանասուն թարգմանչաց։ Յաւուրս տէրուն մեծի իշխանին եաբոսլավի առաւել ևս տարածեցաւ հաւատն քրիստոնէական 'ի ռուսաստան. քանզի նա 'ի 1037 ամի ժողովեաց զբազում գիտնական անձինս վա թարգմանելոյ զեկեղեցական գիրս 'ի յունաց լեզուէ 'ի շկլաւոնացւոց. և եղեալ զդաղափարս այնոցիկ 'ի կիէվ 'ի կառուցեալն 'ի նմանէ յեկեղեցւոջն յանուն սրբուհւոյն սոֆիայ, հրամայեաց օրինակել և 'ի կիր առնուլ զայնս ՝Ամ ուրեք։ 'Ի տասներորդ դարու տարածեցաւ հաւատն քրիստոնէական 'ի վենդրիա, 'ի 1124 ամի 'ի բոմեռանիա, 'ի 1148 էն 'ի նորվեկիա, 'ի 1170 էն 'ի փինլանտիա. 'ի 1186 էն 'ի լիֆլանտիա. 'ի 1320 էն 'ի պրուսիա. իսկ 'ի 1386 էն 'ի լիդուանիա և 'ի կուրլանդիա. այլ ԱՄ մ-

ՐԻԿԱ յայտնի եղև հաւատն քրիստոնէական 'ի 15 դարու, կամ 'ի ժամանակէ զիւտի այդր աշխարհի։

§ 76.

Մասնաւոր, որ պատճառ եղեն պարծանաց Նէական հաւատոց։

Ռազումք յառաքելոց արժանայիշատակ արարին զանուանս իւրեանց յեկեղեցւոջ քան 'ի ձեռն գրուեց իւրեանց։ Աւետարանիչք գրեցին զողջոյն կեանս Քրիստոսի։ Մատթէոս գրեաց վասն հրէից, զորոց Մարկոս արար զհամառօտուն վասն եկեղեցւոյն իտալացւոց. վասն այլ հեթանոսաց դարձելոց 'ի հաւատս քրիստոսի՝ գրեաց Ղուկաս, հուսկ ապա Յովհաննէս 'ի հերքել զայնոսիկ, որք ոչ խոստովանէին յայնոսիկ ժամանակս զանծայն էութեն 'ի քս։ Այլ թէ ոչի օրինակաւ հիմնեցաւ և տարածեցաւ առաջին եկեղեցին Քրիստոսի, զայնմանէ ճառէ ղուկաս 'ի գործս առաքելոց. իսկ այլ առաքեալք գրեցին զթուղթս կամ առ բոլոր եկեղեցիս, կամ առ անձինս կամ առ ամ հաւատացեալ քրիստոնեայս։ Զայսպիսի թուղթս Պօղոս գրեաց 14, որք են, մի թուղթ առ հռովմայեցիս, երկու առ կորնթացիս, մի առ գաղատացիս, մի առ եփեսացիս, մի առ փիլիպպեցիս, մի առ կողոսացիս, երկու առ թեսաղոնիկեցիս, երկու առ Տիմոթէոս արքեպիսկոպոսն եփեսոսի, մի առ Տիտոս եպիսկոպոս կրետայ կղզւոյն, մի առ փիլիմոն՝ բարեպաշտ ձեռնտուն պо-

զոսի 'ի միջի կողոսացւոց. և մի առ եբրայեցիս։ Զ երկուս թուղթս գրեաց պետրոս առ ցրուեալ քրիստոնեայս 'ի հրէից, իսկ յովհաննէս գրեաց զերիս թուղթս և զյայտնուի. զառաջին թուղթ իւր գրեաց առ համայն հաւատացեալս 'ի Քրիստոս, զերկրորդն առ քրիստոնեայ կին ոմն. իսկ զերրորդն առ գայոս երէցն քրիստոնեայ։ 'Ի յայտնուէ նոր գծագրեալեն մարգարէուիք զապագայ որպիսուէ եկեղեցւոյն Աստուծոյ։ Յակովբոս՝ առ 'ի ցուցանել հրէից, թէ հաւատն միայն առանց բարի գործոյ ոչինչ օգնէ քրիստոնէին, գրեաց թուղթ մի. իսկ յուդայ գրեաց զթուղթ մի առ քրիստոնեայս որք 'ի պելլոս և որք 'ի շրջակայս այնր բնակեալ էին վ պահպանելոյ զնա յանառակ անձանց 'ի միջի նոցա եղելոց։ Այս ամ մատեանք նորոյ կտակրանի զոյգ մատենից հնոյն միով բառիւ կոչին՝ ԾՃՇՈՒՆՉ։ Եկեղեցին համիրէր զայն 'ի յետին ժամանակս զմի միայն կանոն հաւատոց իւր, վ բաժանեաց զբովանդակ մատեանս զայսոսիկ ըստ պատշաճի աւուրցն և ընթեռնոյր զայնս ամ յամէ։ Իսկ յորժամ եկեղեցին տարածեցաւ 'ի զանազան կողմանս, յայնժամ բազում ազգք ունէին զաստուածաշունչն յիւրեանց բարբառս. մանաւանդ արևելեան եկեղեցիք։ Ասուրիչք և հարք եկեղեցւոյն նոյնպէս ժանդակ եղեն հաստատուէ ուսման Քրիստոս [illegible]ուածովք իւրեանց, և են սոքին. յառաջին դարու՝ կղեմէս. յերկրորդում՝ իգնատիոս, պոլիկարպոս, յուստինոս, և կղեմէս աղեքսանդրացի. յերրորդում՝ կիպրիանոս եպս կարթագինեցւոց. 'ի

չորրորդն՝ Եւսեբիոս եպս կեսարիոյ 'ի պաղեստին. ալեանաս վարդապետ աղէքսանդրացի, եփրեմ ասորի, մեծն բարսեղ եպս կեսարիոյ. գրիգոր նազիանզին, ամբրոսիոս, հերոնիմոս, օգոստինոս և յովհաննէս ոսկեբերան. 'ի հինգերորդում դարու կիւրեղ աղէքսանդրացի, որոյ գրուածք յայտնի ցուցանեն զուսումն և զծէսս, զորս 'ի կիր առնոյր առաջին եկեղեցին Քրիստոսի։

§ 77.

Ծէսք 'ի ժամու մկրտութեան և օծման առաջին եկեղեցւոյն Քրիստի։

'Ի ժամանակէ անտի առաքելոց մկրտուելն էր նշան մուծանելոյ զոք յօրէնս Քրիստոսի, և յետ ոչ բազում ժամանակայ յառաջին եկեղեցւոյն Քրիստոսի ընկալեալ եղեն զանազան ծէսք 'ի ժամ սրբոյ մկրտութեան, յորոց մատենագիրք եկեղ դարուն պատմեն զհետագայս։ 'Ի մկրտելոյ հարցանէին, իսկ եթէ երեխայ լինէին մկրտեալքն՝ 'ի կնքահօրէն նոցա, թէ հաւատաւն արդեօք նոքա 'ի հայրն Աստուած, յորդի նոր 'ի Յիսուս Քրիստոս և 'ի Հոգին սրբոյ. դաւանին արդեօք զարձակումն մեղաց և զյաւիտենական կեանս։ Յայսոսիկ յաւելուին ապա զհանգանակն հաւատոյ. յետ որոյ հրամայէին հրաժարիլ 'ի չար գործոց, զոր 'ի չորրորդ դարէ անտի առնէին ծիսիւք և աղօթիւք. նախ քան զմկրտելն օծանէին զմկրտելին իւղով 'ի նշան պատերազմի ընդ ներքին ցանկութեց, որ մնայր իւրաքանչիւր քրիստոնէի։ Յետ այսորիկ ընթեռնուին զաղօթս 'ի վերայ

ջրոյ, որով պարտ էր մկրտել, և մկրտէին զնս յանուն հօր, և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Ապա զգեցուցանէին նոցա հանդերձ սպիտակ 'ի նշան նոր կենաց նոցա 'ի քրիստոնէութեան։ Իսկ յետ մկրտութեան օծանէին միւռոնաւ զձակատ, զականջս, զունգունս, զկուրծս, զձեռս և զոտս մկրտելոյն, որ էր կնիք կամ նշան ներքինոյթ բարեաց հոգւոյն սրբոյ, որում արժանանայր նա 'ի ձեռն մկրտութեան։ Եւ այնպէս 'ի դնելոյ աղօթիւք զձեռս 'ի վրայ մկրտելոյն, զոր առնէին առաքելք, հաստատել է սրբազան խորհուրդն դրոշմի։ Ըստ վկայելոյ նոյն պատմագրաց եկեղ դարուն՝ երևի թէ 'ի կիր առնուին զայն յերկրորդ ևս դարու, և եկեղեցին արևելեան հաստատեաց զխորհուրդս զայս 'ի 365 ամի 'ի զաւառական ժողովն Լաւոդիկեայ։

§ 78.

Ծէս 'ի ժամ սրբոյ հաղորդութեան։

Զոր հաղորդուին մատակարարէին ժողովրդեան ընդ տեսակաւ հացի և գինւոյ։ Առաջին քրիստոնեայք ստէպ ճաշակէին զայնս։ Կերպն կատարման խորհրդոյս գոգցեա անփոխոխ մնաց մինչև ցայսօր ոչ եղաւ 'ի Քրիստոսէ։ միայն յաւելան յայնս զանազան աղօթք, որ զտանին 'ի խորհրդատետրս յօրինեալս յայլևայլ անձանց և յայլևայլ ժամանակս։

§ 79.

Ծէս յապաշխարութեան։

'Ի սկզբան անդ քրիստոնէութեան, յորժամ նեղ-

իւր եկեղեցին 'ի բռնուէ հեթանոսաց, քրիս-
տոնեայք 'ի ձեռն զանազան խաբէուեց պատրեալ,
պակասէին 'ի հաւատս. վասն վարդապետք եկեղեց-
ւոյ ջանային սանձահարել զնոսա խստագոյն ապաշ-
խարութիւն, և որք անցանէին զօրինօք հաւատոյ պար-
տաւորէին խոստովանիլ զմեղս իւրեանց հրապա-
բակաւ առաջի ամ ժողովրդեան. և ապա ընկալ-
եալ լինէին ոչ և յառաջն 'ի թիւ որդւոց եկե-
ղեցւոյն քրիստոսի։ Զկնի ժամանակաց ինչ վե-
րացաւ հրապարակական զղջումն, և 'ի տեղի այնր
առ 'ի տալ մեղաւորաց, զորս տանջէր միանգամ
խիղճ մտաց, զայլ ինն միջոց հաշտուեր ընդ եկե-
ղեցւոյն, սահմանեցաւ դաղտնի խոստովանուլի ա-
պաշխարօղին առաջի միոյ քահանայի, որ և յեր-
որդում դարու իսկ 'ի կիր առեալ լինէր յեկե-
ղեցւոջ յունաց։

§ 80.

Ծէս պատկի, զորոշման, և օծման առաջին էկե-
ղեցւոյն Քրիստոսի։

Զ պատկն, զոր հեթանոսք համարէին քաղա-
քական ինն պարտաւորուլի երկուց անձանց, քրիս
տոնեայք իրաւամբք խոստովանեցան լինել Աստ-
ային սահմանադրուլի, և զառարկայ նորին համարե-
ցան առաւել սրբազոյն և խոհեմագոյն։ 'Ի սկզբան
երկրորդ դարուն արդէն իսկ կատարէին պատկք
յայտարարուլք եկեղեցւոյն, և խոստեցեալքն յա-
մուսնուլի ըստ օրինացն Աստուծոյ առնուին 'ի ք-
հանայէն զօրհնուլի այսր զուգակցուլ հանդերձ ա-
ղօթիւք և երդմամբ։ Քահանայուին սկսանի 'ի

ժամանակաց առաքելոց։ Առաքեալք բաց յա-
ղօթից 'ի կիր առնուին և զձեռնադրուն։ Ցա-
ռաջին դարուց անտի սովորուն էր, զի զորս պատ-
բաստէին յաստիճան ինչ հոգևոր, առաջի առ-
նէին եկեղեցւոյն, և միաբան աղօթիւք բոլոր
ժողովոյն խնդրէին զօրհնուն 'ի նոնէ առ այս
կոչումն։ 'Ի ժամանակաց անտի առաքելոց պա-
հէր նոյնպէս եկեղեցին և զօծումն, քան զի յե-
կեղեցական պատմուն անդ գոն բազում օրինակք,
թէ ախտացեալքն ցաւոք ինչ, որք հաստատուն
հաւատով յուսային յողորմուն Աստուծոյ, 'ի
ձեռն աղօթից եկեղեցւոյ և օծման իւղով ազա-
տէին 'ի տկարուէ։

§ 81։

Նշան խաչի և պատկեր պատկերաց առաջին էկե-
ղեցւոյն Քրիստոնէից։

Ցարժանահաւատ գրուածս եկդ դարուն
պատմի և զայլոց եկեղեցական ծիսից, ոչի են
խաչն, զորմէ ասի թէ և 'ի ժամանակս նախկին
քրիստոնէից էր 'ի մեծի յարգանս, և թէ առ
ինքեանս ունէին զնա հանապազ յամ գործս
իւրեանց, ոչ զի այնու 'ի մտի ունիցին զխաչե-
ցեալն 'ի վրայ նոր զքրիստոս։ Այլ իբրև կառուցան
եկեղեցիք 'ի չորրորդ դարուն, սկսան զխաչս,
զպատկերս մարտիրոսաց և զայլոց նահատակաց
դնել յեկեղեցւոջ. զի ժողովուրդն միշտ առաջի
աչաց ունիցի զայնոսիկ անցս զորս առաջի առ-
նէին պատկերքն, և ջերմեռանդուն 'ի միտս
բերցեն զայնոսիկ յեկեղեցւոջ։

§ 82.

Ծէսք պօնտիֆիքուէից։

Սահմանեցան և տօնք, զի քրիստոնեայք Յայնոսիկ աւուրս հաւաքեալ 'ի սբ եկեղեցին գոհասցին զԱստուծոյ վ՚ բարերարութեցն, և լսիցեն զվարդապետութի՛ն, զի նոքօք առաւել և հաստատեսցին յառաքինութիս։ Եւ որպէս զի աւելի՛ և պատուեսցեն զաւուրսն զայնոսիկ, հրամայեալ լինէր նց պարապիլ յաճախագոյ գործս, այց առնելով հիւանդաց, միխիթարելով զտրտմեալս և օգնելով աղքատաց ողորմութիւ՛ իւրեանց։ վ՚ակ նախնի քրիստոնեայք մեզ համարէին անցուցանել զայսոսիկ աւուրս 'ի պարապորդութի՛ն, և առաւել և յանօգուտ և յանպատկան գործս։ Յաւուր կիրակէի սբ՚ յարութի՛ն նք տօն ուրախութի՛ն, հսկմամբ անցուցանէին զգիշերն յեկեղեցւոջ. յորում պահու բոլոր եկեղեցին և ամ տունք լուսաւորեալ լինէին ճրագօք և լապտերօք. և 'ի ծագել առաւօտուն տային զառատ ողորմութի՛ն աղքատաց։ Յաւուր յայտնութի՛ն Տ՚ն օրէն էր նմանապէս լուսաւորել զեկեղեցին ճրագօք, և 'ի յիշատակ մկրտութի՛ն Քրիստոսի կատարել 'ի վ՚ ջրոյ զքանի մի ծէսս կարդալով զաղօթս վ՚ այսր վախճանի և եթ յօրինեալս, և անտի ծագեցաւ ջրօրհնութի՛ն։

§ 83.

Պահք ասոջին եկեղեցւոյն Քրիստոնէից։

Պահք 'ի սկզբանէ անտի եկեղեցւոյն էին իբրև միջոց ինչ առ 'ի հաստատուլի ջերմեռանդութի՛ն 'ի

ձեռն ժուժկալուն և զգաստուն. վասն հայեցեալ 'ի ժամանակս առաքելոց տեսանեմք զպահս առնոյն իսկ կանխագոյն եղեալ քրիստոնեայս։ Առաքեալք պահէին յայնմիկ ժամանակի, և ծառայէին Աստուծոյ. յորում առին հրաման առաքել զսրբոցս և զբառնաբաս 'ի ծառայութի Աստուծոյ։ Յորոց վրայ և հիմնեցան սպա պահք առաքելոց 'ի յետագայ դարս 'ի յիշատակ ելից առաքելոց 'ի քարոզութի վարդապետութի Քրիստոսի, և 'ի պատրաստել նոցա զանձինս իւրեանց առ այն պահօք։ Աւուրք մեծի պահոց 'ի յիշատակ չարչարանաց Քրիստոսի, և 'ի ժողովն լաւոդիկեան սահմանեցան։

§ 84.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Արժանայիշատակ անձանց և գործոց և իրաց մերս ուղղափառ եկեղեցւոյ հայաստանեայց՝ յերկարապատում է և բազմահատոր մատենից կարօտ. այլ առ տեղեաւս 'ի պէտս մանկանց 'ի կարճոյ յոյժ յառաջ բերեմք զգլխաւորսն 'ի վեցեակ բաժինս։

Բաժին Առաջներորդ.

Ի էջէն հայոց ընդ հաւատաշար հայ Ռաբաւորսոյ ամս 270. յամէ պէտն 32 մինչև ամն 302.

§ 85.

Հայոց եկեղեցւոյն հիմնադիրք, հովիւք, քէք, մարտիրոսք, Ռաբաւորք, տաքնաբերք, ժողովք, հաւատք, ծէսք.

Գլուխ անկեան, հիմն էական, վէմ անվանական, և առաջին Ճարտարապետ մերս եկեղեցւոյ՝ է նոյն ինքն փրկիչն մեր Յիսուս Քրիստոս. որ զնամակ՝ զանձեռագործ պատկեր և զաշակերտ իւր առաքելով առ աբգար թագաւորն մեր՝ սկիզբն արար հաւաքել ինքեան ժողովուրդ կամ շինել իւր եկեղեցի յազգէս հայոց. նորա հրամանաւ թովմայ առաքել յամին 32 ուղևորեաց զեղբայր իւր զԹադէոս յեդեսիա, որ զաբգար թա-

գաւոր մեր և զբաղմուլի հայոց դարձոյց 'ի հաւա-
տըս Քրիստոսի, հիմնեաց զեկեղեցիս յեդեսիա,
'ի շաւարշան, 'ի սիւնիս, յաղուանս, 'ի կեսա-
րիա, և յայլ քաղաքս. ձեռնադրեաց յեպս զադ-
դէ, զթէոփիլոս, զզաքարիա, և զայլս. կար-
գեաց զբաղմուլի քահանայից, դրեաց կանոնս, և
հովուեալ զհայս զամս 17, կատարեցաւ յամի ան
49։ Յետ նորա եկն բարթուղիմէոս, քարոզեաց
'ի մեծն հայս զամս 4, ընդարձակեաց զեկեղեցի
մեր և նահատակեցաւ յամին 68 յուրբանոս քա-
ղաքի հայոց։ Յուդա թադէոս զամս 3 տարա-
ծեալ զքրիստոնէուլին 'ի մեծն հայաստան, կատա
րեցաւ յամին 69, և թաղեցաւ յորմի քաղաքի։
Զկնի հիմնադրացդ՝ զեկեղեցի մեր հովուեցին
ցամ տեառն 302, եղիշէ և ստեփանոս աշակերտք
յեսթանասանից. եպսքն ադդէ, զաքարիա, թէո-
փիլոս, կումսի, բարսումա, բաբելաս, զոլթի-
կոս, մեհրուժան, վլասիոս, ակակիոս, արքեղա-
յոս, աղէքսանդր, փիրմիլիանոս, կղենէոս, ղե-
ւոնդիոս, և այլ բազումք, որք 'ի պատճառս հա-
լածանաց՝ 'ի ծածուկ հայրական խնամոք արածէ-
ին զխոտն Քրիստոսի ըստ դաւանուն և ծիսից
եկեղեցւոյն երուսաղէմայ։ Զանծային պաշտա-
մունս կատարէին լեղուաւ հայոց, բայց վարէին
մատենիւք յունաց և ասորւոց՝ առ 'ի չդոյէ հայ-
կական տառից. ունէին զայն դաւանուլի հաւա-
տոյ՝ զայն խորհուրդս եկեղեցւոյ և զայնպիսի սք
արարողուլիս՝ զոր և այլ եկեղեցիք քրիստոնէից ու
նէին, զի յայսմ միջոցի դեռ չէին բաժանեալ յի-
ւերեալոյ քրիստոնեայք։ Տեղիք անծային պաշտամանն

էին տունք հաւատացելոց, ևս և տաճարք կամ մատուռնք, զոորս առաքեալն Թադէոս կառոյց 'ի յԵդեսիա, 'ի շաւարշան, 'ի կեսարիա, և այլուր. նոյնպէս և բարթուղիմէոս շինեաց զերկուս մատուռնս 'ի գիւղսն որթվատ և վանանդ. այլև զվանքն հոգեաց յանուն սրբ ածածնի յանձաւայիս. մխիթար ոմն աբեղայ կամ եպս յեկդ դարուն շինեաց զվանսն Թանահատի 'ի սիւնիս, և այլք յայլ զանազան տեղիս։ Բազմուի յոյժ մարտիրոսաց սրբ արեամբ հուրեանց ոռոգեցին զպարտէզ մերս եկեղեցւոյ յայսմ բաժնի. ոորի եղեն 3440 նահատակք ընդ Թադէոսի և սանդխտոյ կուսին վկայեալք. նք՝ որ ընդ բարթուղիմէոսի, ը ադդէի, ընդ բարսումայ և այլոց վճարեցան. ոսկեանք հինգ սրք յամին 107. սուքիասանք 17 անձինք յամին 130. նոքա զորս խոսրով Թագաւոր մեր նահատակէր յամսն 215—230 (խորենայ, ը. 75). Լիէոդորոս մանուկ յամին 286. հռիփսիմեանք 36 կուսանք յամին 301. և այլ բազումք 'ի զանազան տեղիս։ Ժողով ինչ լեալ ոչ յիշատակի ուրեք, զի և չեղեն հերետիկոսք 'ի հայոց։ Մատենագիրք համարին Թադէոս առաքեալ, լերուպնայ պատմագիր եղեսացի, ուլիպ քուրմ անեցի, բարդէզան եդեսացի, յուլիոս ափրիկանոս, փիրմիլիանոս եպս կեսարիոյ, արտիթէս քահանայ, և այլք։ Թագաւորք հայոց էին սրբն աբգար, անանէ, սանատրուկ, երուանդ, արտաշէս, արտաւազդ, տիրան, տիրան, վաղարշ, խոսրով, և տրդատ։

Բաժին Երկրորդ.

Եղեղեցին հայոց ընդ չրխոռոնէայ հայ Խաղաւորաց
ըստ 126. յամէ ռէուռն 302=428.

§ 86.

Հայոց եղեղեցւոյն կանոնքեկոս, մեծրապօլիսս, Խաղաւորս, տարբերոս, տաքենաղեր, կրօնաւորս, ժողովս, հաւատս, ծէս, խորհուրդս, պահս.

Տրդատ թագաւոր մեր ընկալեալ զքրիստոնէա կան հաւատս յամին 302, զհալածեալ և զչարչարեալ եկեղեցին հայոց ետան 'ի հրապարակ լուսոյ. բոլոր ազգն հայոց դարձաւ 'ի սէր հաւատս, կարգեցաւ հոգևոր գլուխ եկեղեցւոյ կամ կաթողիկոս, պայծառացան սէր տաճարք կամ աղօթատունք աւելի քան 2000. սահմանեցան վիճակաւոր եպիսկոպք 'ի հայաստան աշխարհի իբր 500, և ծաղկեցան ամ բարեկարգութիւնք յեկեղեցւոջ: Զաթոռն կաթողիկոսական կալան գրիգոր լուսաւորիչ. արիստակէս. վրթանէս. յուսիկ. փառներսէհ. ներսէս մեծ. շահակ. զաւէն. ասպուրակէս. և մեծն սահակ: Թագաւորեցին յարշակունեաց սէն տրդատ. խոսրով. տիրան. արշակ. պապ. վարազդատ. արշակ. վաղարշակ. խոսրով. վռամշապուհ, և արտաշիր: Երևելի սէք և մարտիրոսք բաց 'ի լուսաւորչէն և յորդւոց և 'ի թոռանց նորա՝ եղեն, տրդատ թագաւոր. գրիգոր ազուանից կաթողիկոս. զուիլիա քահանայ. անտոն և կրօնիդէս ճգնաւորք. ստե-

փանոս ուլնեցի 35 ընկերօք. խադ և մելետիոս եպՀք. յակոբ մծբնայ հայրապետ. և այլք բազումք յոյժ։ Զիրաց հայոց մատենագրեցին՝ խոռոհբուտ կամ եղիազար. դրիգոր լուսաւորիչ. ագաթանգեղոս. յակոբ մծբնայ եՀպս. զենոբ առաջնորդ գլակայ. բուզանդ եՀպս փոստոս. սահակ պարթև կաթողիկոս. մեսրովպ վարդապետ մաշտոց. կորիւն աքան չելի. եզնիկ կողբացի. և այլք։ Յայսմ միջոցի յամի տեառն 407. սՀն մեսրովպ սահմանեաց գյատուկ տառս լեզուիս, որով թարգմանեցան ՀԾաշունչ մատեանն և այլ գրուածք 'ի յունաց և յասորւոց 'ի հայս, բացան բազում դպրոցք և ծաղկեցան գիտութիւք և արուեստք։ Հայրապետք հայոց գումարեցան 'ի ժողով հնգիցս, նախ 'ի վաղարշապատ յամին 325. երկրորդ յաշտիշատ յամին 365. 'ի յաջորդ ամի դարձեալ անդ. և երկիցս դարձեալ 'ի վաղարշապատ յամն 402. և 426։ Գտան հայրապետք մեր և յերիս յառաջին տիեզերական ժողովս, 'ի նիկիա, յեփեսոս, և 'ի կոստանդնուպոլիս, միաձայնելով 'ի հաւատս ընդ այլոց ուղղափառ քրիստոնէից, և գաղափարելով զգովանի ծէսս նոցա. բայց միշտ անաղարտ պահելով զանկախութի իւրեանց և զինքնագլխութի, ոչ ծառայացեալ ինչ ուրեք պատրիագաց յունաց կամ լատինաց։ Յաւուրս ներսեսի մեծի՝ սահմանեցաւ պատիւ մետրապոլտի. զոր ետուն չորից արքեպՀսց հայոց նստելոց 'ի սեբաստիա, 'ի մելիտինէ, 'ի նփրկերտ, և 'ի սիւնիս։ Կաթողիկոսք

մեր ունէին զարտօնուն ձեռնադրելոյ նախ զկա-
թողիկոս ազգին վրայ՝ 'ի սկզբանէ դարձի նո-
ցա մինչև ցկիւրիոն զամս իբր 200, և եկեղ զկա-
թողիկոս աղուանից յաթոռն եղիշէի առաքե-
լոյն, որոց առաջինն եղև գրիգորիս (որդի վրթա
նեսի, ձեռնադրեալ 'ի հօրէ իւրմէ), որում յա-
ջորդեցին շուփհաղիշէ. մատթէոս ա. սահակ
ա. մովսէս ա. պանդ. եղիազար ա. գրիգոր բ.
զաքարիա ա. դաւիթ ա. յովհաննէս ա. և ե-
ղեմիա, նստեալ յամին 420։ Յաթոռն ստաթէո-
սի առաքելոյն 'ի սիւնիս նստան, գրիգոր ա, ձեռ-
նադրեալ 'ի սբ. լուսաւորչէն. մաշտոց. գրիգոր
բ, մետրապոլիտ կացուցեալ 'ի մծբէն ներսիսէ,
և անանիա ա, որ նստաւ զամս 42։ Գրակա-
նուն մեր ՁԵասեցուս նախ յամին 302, 'ի սկզբան
քրիստոնէութեան ազգիս, երբ անընտրող խոհակա-
նութեամբ՝ հրոյ ճարակ տուան ամ մեհեանք կռոց,
յորս ըստ սովորութեան նախնեաց պահեալ լինէին
ամենատեսակ մատեանք գանձարանք հնութեց հա-
յոցս։ Կորուստ անոնորոգելի, զոր չէ հնար ըստ
բաւականին ողբալ։ Եկեղ յամի ան 381. յո-
րում ուրացողն մերուժան հրով կորոյս զամ յոյն
և ասորի մատեանս 'ի բոլոր հայաստան գտեալս։
'Ի կրօնաւորաց անտի՝ զորս լուսաւորիչն էած
'ի կեսարիոյ, մուծաւ յազգ մեր մինչև ցայսօր ա-
նապատական և վանական վիճակ կենաց, և բազ-
մացան յոյժ վանորայք և կրօնաւորք յամ տեղիս։
Յայսմ դարու կաղմեցան և հաւատապատում
գրեանք մերս եկեղեցւոյ, ժամագիրք, մաշ-
տոց, խորհրդատետր, և այլք, այլ թէ քանի

խորհուրդք ընկալեալ էին 'ի մերոցս՝ չէ՞ յայտ. զի գրուածք սրբ լուսաւորչին և հին ծիսարանք ոչ յիշեն որոշակի զեօթն խորհուրդս սրբոյ եկեղեցւոյ. այլ պահք և տօնք սրբոց արդէն մուծեալ էին առ մեզ, որպէս և յայլ եկեղեցիս։

Բաժին Երրորդ.

Եկեղեցին հայոց ընդ հահանգամանս Խաչաւորաց պարսից և տաճկաց զամս 457. յամէ թն 428—885.

§ 87.

Հայոց եկեղեցւոյն հանգամանքքն, ոչ՝, տարաբերութիւնք, տաճարաձիւրք, ժողովք, հաւատք, ծէսք, հերձեալք, աճուն, նուագուն.

Որովհետև եկեղեցին է 'ի թագաւորութեան, յայն սակս ըստ հանգամանաց տէրութեանն՝ զգաստի և եկեղեցին 'ի բարւոյ մասին և յանբարին. որոյ վրայ և մերս եկեղեցի 'ի վաղամիջ հայ թագաւորութեան անկաւ ընդ պէսպէս փոփոխութիւն. և նախ 'ի սկզբան այսր դարու՝ բռնութիւն պարսից 'ի ներքս մտին երեք անարժան կաթուղիկոսք, սուրմակ, բրբքիշոյ, և շմուէլ. յետագայքն ստիպեցան լքանել զվանս էջմիածնի և փոխել զաթոռ իւրեանց 'ի վաղարշապատ 'ի դուին յամին 452, սակս անդ նստելոյ մարզպանաց պարսից և տաճկաց. ուր և զկնի յոսեփայ յաջորդեցին 38 օրինաւոր կաթուղիկոսք, 'ի մելիտոսէ սկսեալ մինչև յովհաննէս եկդ, յորոյ 'ի տաճարդ ամին 'ի բարբարոսաց անտի թագաւորեաց աշոտ մեծ։

Կաթողիկոսք հայոց յաթոռն աղուանից՝ 'ի պարտաւ քաղաքի՝ եղեն, աբաս, վիրոյ, զաքարիա ՚Բ. յովհաննէս ՚Բ. ուխտանէս. եղիազար ՚Բ. Ներսէս ՚Ա. սիմէոն ՚Ա. միքայէլ. անաստաս. յովսէփ ՚Ա. դաւիթ ՚Բ. դաւիթ ՚Գ. մատթէոս ՚Բ, մովսէս ՚Բ. ահարոն. սաղովմոն ՚Ա. թէոդորոս. սաղովմոն ՚Բ. յովհաննէս ՚Գ. մովսէս ՚Գ. դաւիթ ՚Դ. յովսէփ ՚Բ. և սամուէլ, նստեալ յամին 875։

Եպիսկոպոսք սիւնեաց յաթոռն ստաթևու՝ էին, նուն. դաղատ. ստեփաննոս ՚Ա. մուշէ. երիցակ. մակար. պետրոս քերթող. գիգան. վրթանէս. գրիգոր ՚Դ. քրիստափոր. դաւիթ ՚Ա. մաթուսաղայ քերթող. աբրահամ. յովսէփ ՚Ա. յովհաննէս ՚Ա. մովսէս քերթող. անանիա ՚Բ. յովհաննէս ՚Բ. ստեփաննոս ՚Բ քերթող. յովսէփ ՚Բ. յովակիմ. սաղովկ. յովհաննէս ՚Գ. սաղոմոն ՚Ա. եղիա. թէոդորոս. գէորգ. դաւիթ ՚Բ. յովհաննէս ՚Դ. սաղոմոն ՚Բ. և յովհաննէս ՚Ե նստեալ յամին 881։

Երևելի սրք և մարտիրոսք՝ բաց 'ի կաթողիկոսաց և յեպսց, եղեն՝ ատովմեանք զօրավարք. վարդանանք 1036 մարտիրոսք. շուշան դուստր վարդանայ. սմբատ բագրատունի. դաւիթ դունեցի. վահան գողթնացի, սահակ և համազասպ արծրունիք. սմբատ սպարապետ. և այլ յոլովք յեկեղեցականաց և յաշխարհականաց։

Զ փառս մատենագրի ժառանգեցին մովսէս խորենացի պատմաբան քերթող և Ճառագիր. մամբրէ վերծանող Ճառագիր. դաւիթ անյաղթ. յով-

հան մանդակունի Ճառագիր • եղիշէ պատմաբան
և Ճառագիր • ղազար փարպեցի պատմագիր• ստե-
փաննոս ՝ սիւնեցի՝ երգաբան• աբրահամ եզն
Ճառագիր • պետրոս սիւնեցի քերդող • յով-
հան մամիկոնեան պատմաբան • դաւիթ փիլիսո-
փայ բագրեւանդացի Ճառագիր • անանիա շիրա-
կունի աստեղաբաշխ և տոմարագիր • թէոդորոս
քռթենաւոր ՝ծաբան • մովսէս սիւնեցի քեր-
թող՝ Ճարտասան և Ճառագիր • գրիգոր արշա-
ռունի ծիսագիր • սահակ ՝ կաթուղիկոս բա-
նաստեղծ • մովսէս կաղկանտուացի պատմաբան
զաղուանից • յովհաննէս օձնեցի ՝ծաբան և Ճա-
ռագիր • ստեփաննոս ՝ սիւնեցի Ճառագիր • զա-
քարիա կաթուղիկոս մեկնիչ և ՝ծաբան • հա-
մամ արևելցի մեկնիչ • և այլք ։ Կորեան ան-
թիւ մատեանք մեր յանդադար աւերածուեց՝ յա
ւարառուեց և 'ի հրայրեցուեց գաւառայ քաղա-
քաց և վանորէից՝ 'ի ձեռաց յունաց՝ պարսից՝
և հագարացւոց • ոչիք եղեն 'ի թագաւորուն
յազկերտի եկեղի (յամն 439—457)• 'ի սղոզմունս
սրց վարդանանց ընդ պարսիկս • 'ի չարուէ վա-
սակայ ուրացողի • 'ի կործանման տիգրանակերտ
քաղաքին հայոց (յամին 503)• յասպատակուեց
հագարացւոց 'ի հայս (յամն 640=850)• 'ի յա-
տակման դուին քաղաքին (յամին 640)• յաւա-
րել հերակլի, եկդ յուստինիանոսի և թէոփի-
լոսի կայսերաց յունաց զբաղում քաղաքս հա-
յաստանի (յամն 620 • 686 • և 829) ։

Ուղղափառ դաւանուն մերս եկեղեցւոյ ՝ոչ իւիք
ինչ եղծաւ յայսմ միջոցի, բայց յուզեցան բա-

ղում անոտի վէճք 'ի պատճառս չորրորդ տիեզերական ժողովոյն և վն հերձուածոց ինչ, յորոց սակս 'ի ժողով գումարեցան հայրապետք մեր յոլով անգամ. որոց գլխաւորքն են, երկու ժողովք աշտիշատու. և երկու՝ շահապիվանու. եօթն ժողովք 'ի դուին քաղաքի. երկու 'ի պարտաւ քաղաքի. ժողովքն կարնոյ. վաղարշապատու, շիրակվանու, և այլք։

Հերձան 'ի միաբանուէ եկեղեցւոյ մեր, յովհան մայրագոմեցի, սարգիս աշակերտ նը. և խումբ ինչ հայոց յարեալ 'ի պաւլիկեան աղանդաւորս զամս իբր 100 (650—750). յորս 'ի վերջին ժամանակս (յամէն 840) յարեցան թոնդրակեցի ասայեալ հերետիկոսք կամ անաստք։ Իսկ ըստ ծխոց՝ եղեն ոմանք 'ի հայոց մանաւանդ ը տէրուն յունոյ ընակելոց, որք յաւուրց անտի եղը կաթուղիկոսի՝ միաբանեցան ընդ ծխի եկեղեցւոյն յունց։ Ընդ լատինս և ընդ հայրապետս հռոմայ ոչ ոք 'ի մերայոց աբար ինչ հաղորդակցուն հաւատոյ կամ ծխոց. այլ ընդ եկեղեցւոյն և պատրիարգայ յունաց միաբանեցան կաթուղիկոսք մեր, կոմիտաս, եղը, ներսէս շինող, զաքարիա, և այլք։

Ահեցին անդամք եկեղեցւոյ մերոյ՝ նախ դարձմամբ բազում մոլորեալ հայոց ջանիւք սրբոյն մեսրոպայ և աշակերտաց նորա ղևոնդայ, ենովքայ, գնիթու, դանանու, և այլոց, 'ի գաւառսն գողթան, սպերայ, եկեղեաց, բաղասականի, գարդմանայ, գուգարայ, և այլուր։ Երկրորդ լուսա-

ւորուբ հեթանոս հայոց պարծկանք դաւառին արցախայ վաստակօք յովքայ ուրուցն Ճգնաւորի 'ի Ի դարու։ Այլ բազմօք նուաղեցան թէ անընդհատ սպանուբ և մահուամբ 'ի պատերազմունս ընդ պարսից և այլոց, թէ ուրացուբ հաւատոյ 'ի Ֆալածանս յազկերտի և յետագայ թագաւորաց, և թէ չարուբ նախադրեալ աղանդաւորաց և հերետիկոսաց։

Բաժին Զորրորդ.

Ի հէրէզեցին հայոց ընդ չրիստոնէից հայ թագաւորք
զամս 490. յամէ տէառն 885—1375.

§ 88.

Հայոց էհէրէզեցւոյն թագաւորք. Կամուղիկոսք. պարբերքարգք. Տարեմուտք. ուրբ. Տաճարագիրք. Հերչուածք. Ժողովք. ուճուն. Նուապուն.

Ա.թոռն թագաւորուն ազգիս՝ անկարգ վարջուբ արշակունեաց այրիացեալ զամս 457, Հուսկ ապա արուբ լաւուբ աշոտոյ բագրատունեաց վերատին պսակեցաւ յամին 885. և տևեաց զամս 194. յորս նստան բաց յաշոտոյ առաջնոյ ուրթ թագաւորք ցամն 1079. որոց անուանք են, սմբատ ա. աշոտ բ. աբաս. աշոտ գ. սմբատ բ. դաւիկ ա. յովհաննէս. և դաւիկ բ. որոյ յետ մահուանն՝ մի յազգականաց նր ռուբէն անուն

սկսաւ յամէն 1080 ինքնակալուն թագաւորակերպ պայազատել 'ի կողմանս կիլիկիոյ. յետագայք նոյ անձինք 23 անուամբ և արդեամբք թագաւորեցին 'ի զանազան քաղաքս կիլիկիոյ զամս 295, յամէն 1080 մինչև 'ի 1375. և ընդ մահուան յետին թագաւորի 'ի դոցանէ Լեւոնի Ը, մահացաւ խսպառ և բարձաւ թագաւորութի յազգէս հայոց դաւադրութ և նենգութ արևմտեայց, ոչ պապիս հռովմայ և թագաւորաց եւրոպացւոց, ոչ յայտնի խոստովանի լատինահայն միքայէլ չամչեան ('ի պատմութ հայոց, 'ի բազում տեղիս, և 'ի խրախճանն պատմութ յեր. 290):

Ընդատուր անմիաբանութի՝ օտարասիրութի և ուսումնատեցութի հայոց այսց ժամանակաց՝ բուսոյց հակառակ օրինաւոր թագաւորաց և զայլ երիս ճիւղս ինքնաձեռնադրեալ անհարազատ թագաւորաց, ըստ որոց նախ 'ի վասպուրական նահանգի նստան յարծրունեաց վեց հակառակաթոռ թագաւորք զամս 96, յամէն 908 մինչև 1004. որոց վերջինն սենեքերիմ տկարացեալ խսպառ 'ի շրջապատ թշնամեաց՝ ետ զերկիր իւր կայսեր յունաց յամին 1021, և էառ զքաղաքն սեբաստիա, ուր նստան երեք յաջորդք իւր զամս 59 (1021=1080). յորմէ և անդր դադարեցան խսպառ: Եկեղ 'ի կարս քաղաքի վանանդայ նստան երեք ազգատամբ թագաւորք մեր, մուշեղ, աբաս և դաւիթ, զամս 122. յամէն 962=1083: Երրորդ՝ 'ի սիւնիս նստան վեց թագաւորք 'ի հայոց զամս 196, յամէն 970=1166: Զանց առնեմք յառաջ բերել աստանօր զհայկազունս

թագաւորս աղուանից, զի յուշի ունիմք տպագրել զպատմութիւն աղուանից զյօրինեալն 'ի Մովսիսէ կաղականտացւոյ՝ թէ Տէր յաջողեսցէ։

Զաթոռն հայրապետական կալան յայսմ միջոցի 28 օրինաւոր կաթողիկոսք, 'ի Յովհաննու պատմագրէ սկսեալ ցպօղոս ա. որք և զաթոռս իւրեանց շարժեցին 'ի քաղաքէ 'ի քաղաք, 'ի պատճառս տատանելոյ թագաւորց մերոց աստ և անդ։

Կաթողիկոսուն աղուանից արժանացան Յովհան, սիմէոն բ, դաւիթ ե, սահակ բ, գագիկ, դաւիթ զ, և է, պետրոս, մովսէս է, Յովհաննէս գ, գրիգորիս գ, ստեփաննոս, Յովհաննէս ե. ներսես բ. և այլք։ Իսկ սիւնեաց եպիսկոպոսք 'ի տաթև և 'ի նորավանս նստեալք համարին իբր 32 անձինք։ Յայսմ միջոցի եպիսկոպոսն հայոց 'ի վանս սրբոյն Յակոբայ յԵրեմ, սարգիս անուն՝ կացուցաւ պատրիարգ յամին 1311. որում մինչև ցայսօր յաջորդեն և այլք նովին պատուով ընդ ձեռամբ կաթուղիկոսին էջմիածնի։

Իրեւելի սրբք և մարտիրոսք յիշատակին, կաթուղիկոսքն պետրոս գետադարձ, գրիգոր վկայասէր. բարսեղ. գրիգոր պահլաւունի. ներսէս շնորհալի, գրիգոր տղայ, և գրիգոր ապիրատ. թագաւորքն աշոտ բագրատունի. սմբատ. և աշոտ ողորմած. եպիսկոպոսքն մակար, ներսէս լամբրոնացի. և ստեփաննոս սեբաստացի. և այլք յեկեղեցականաց և յաշխարհականաց աղգիս բազումք։

'Ի յոլով մատենագրաց յիշատակեմք զհռչակաւորսն, որք են պատմագիրքս Յովհաննէս զ

կաթուղիկոս. Թովմայ արծրունի. ստեփաննոս ա-
սողիկ, տիգրան պահլաւունի. արիստակէս լաս-
տիվերտացի, և յովհաննէս սարկաւագ. այլ և
գրիգոր մագիստրոս. խոսրով. նարեկացի, ներ-
սէս շնորհալի, լամբրոնացի, և այլք բազումք
յոյժ իբր 120 հեղինակք։

Սակայն բազումք 'ի գրուածոց այսց և նախ-
նի հեղինակաց կորեան 'ի ձեռս մեր յայսմ մի-
ջոցի բազմադիմի օրինակաւ. 'ի կործանման դու-
նայ երկիրս յերկրաշարժուէ (յամսն 861. 894).
յաշխարհակորոյս աւերածուէ հայաստանի 'ի յու-
սուփ ոստիկանէն զամս 20 (910=930). այլ և 'ի
սկիւթայւոց զամս 10 (1048—58). 'ի յատա-
կելն ալփասլանայ զանի քաղաք (յամին 1064)
և դարձեալ մուղալ թաթարայ յամին 1239.
'ի քանդելն մահմետականայ ղեղեսիա (յամին
1144), ուր պահեալ էր անդին դիւանն մատե-
նից նախնեայ. 'ի կործանելն իսմայելացւոյ
զբաղաքերդ (յամին 1170), ուր կորեան աւե-
լի քան տասն հազար ձեռագիր մատեանք մեր,
ըստ ասելոյ օրպելեան ստեփաննոսի. 'ի համայնա-
ջինջ կոտորածի աշխարհին կիլիկիոյ 'ի թա-
թարայ՝ 'ի թուրքայ և յեգիպտացւոյ՝ երկրս,
յամսն 1292. 1322. և 1335։ Թողումք յիշել
զայլ ևս կործանմունս զանազան դաւառաց՝ քա-
ղաքաց՝ վանորէից՝ և եկեղեցեաց յամ սահմանս
մեծ և փոքր հայաստանի 'ի պէսպէս երկրաշար-
ժուեաց՝ 'ի հրայրեցուեաց և այլ պատճառաց։

Զ միուն հաւատոյ և ծխոյ եկեղեցւոյ մերոյ՝
հերձին նախ դաւիթ ոմն անանուանելի եպիսկո-

ղոս, որ յամին 1114 'ի կղզին աղթամարայ օծաւ
ապօրինաւոր կաթուղիկոս, յորմէ և այսր յա-
ջորդեն անդ նոյնպիսի հակառակաթոռ սուտա-
նուն կաթուղիկոսք։ Երկրորդ՝ առաջնորդք
թոնդրակեցի աղանդոյն, որոց գլխաւորքն յի-
շին, ամբաս. թորոս. անանէ. արքայ. սար-
գիս. վահան. կիւրեղ. յովսէփ. յեսու. զա-
զար. յակոբ եպիսկոպոս. կուռնծիկ. վրբվեռ.
և այլք, որոց ջարուքիւն տարածեալ 'ի միջի
սակաւուց ոմանց հայոց՝ զամս իբր 200 (840—
1050) 'ի վերջոյ անհետացաւ։ Երրորդ՝ ոմանք
'ի կիւլիկեցի կաթուղիկոսաց և 'ի թագաւորաց՝
զմարմնաւոր օգուտ և զկորստական շահ աշխարհի
նպատակ ունելով՝ յօժարեցան փոփոխել զանդամ
ինչ հաւատոյ կամ զծէս ինչ նախնի սրբոց
մերոց, միաձայնիլ ընդ լատինական պապս հռով-
մայ, և մուծանել յաղագ մեր զկրօն և զծէսնո-
ցա, սակայն վերին նախանձամուքեամբ զրկեցան
յայդպիսի ապօրէն յուսոյ իւրեանց և 'ի նանիր
եղեն ամենայն պարսաւելի ջանք նոցա։ Չորրորդ
դասն ևս ոմանք հայրենասեաց և ծանծաղամիտ
խորթ որդիք եկեղեցւոյս հայոց. որք սնանա-
կան խելագարութեամբ՝ արատաւոր կարծելով
զուզղափառ հաւատս և զկրօն մեր, ամիւ փո-
խեցան առ լատինս, և ձեռն արկին շրջել զհայս
'ի ծէս լատինաց. սոքա 'ի լրուն լրբութեան
իւրեանց՝ արդեամբք հերձուածող և բաժանիչ
գոլով՝ սուտ անուամբ միաբանողս կամ «-նի-
ռ»-ս կոչեցին զինքեանս. որոց գլխաւորքն էին,
բարթուղիմէոս լատին եպս, յովհան քռնեցի.

Ներսէս պաղոն, սիմէոն պէկ, մարգար, յովհաննէս, հայրապետ, առաքեալ, գրիգոր, կարապետ, և այլ կարգուրաց կրկնակնուք սինլիքորք, որոց աղանդ մոլորութեան Ճարակեալ հատակտուր աստ և անդ 'ի հայաստան և 'ի կիւլիկիա, զամս իբր 200 (յամէն 1330=1520) հուսկ ապա ջնջեցաւ ըստ արժանւոյն 'ի միջոյ։ 'Ի յորդորանաց կիւ մանուէլ կայսեր յունաց՝ շարժեցան ներսէս շնորհալի և այլ կաթուղիկոսք և եպիսկոպոսք մեր միաձայնիլ ընդ յոյնս ծիսիւք ինչ, բայց և այս փափաք նոցա չեհաս 'ի վախճան։ Յայդ ամենայն իրաց պէտս՝ գլխաւորք աղգիս 'ի ժողով գումարեցան չորիցս յանի քաղաքի. երիցս 'ի հարք գաւառի. երկիցս 'ի սեաւ լերին. եօթնիցս 'ի սիս քաղաքի. երկիցս 'ի հռոմկլայ, քանիցս այլուր։

Ամեաց եկեղեցի մեր յաւելմամբ նոր անդամոց՝ երբ յամին 1166 արևորդի ասացեալ բազմաթիւ հեթանոս հայք դարձան ղջմամբ և մկրտութեամբ 'ի ծոց մոր իւրեանց. զնոյն ապարին և ոմանք 'ի պաւլիկեանց և 'ի թոնդրակեցւոց։

Բայց և նուազեցաւ եկեղեցի մեր նախ՝ անջատմամբ յիշեալ թոնդրակեցի և ունիթոռ աղանդաւորացդ. երկրորդ՝ բռնաւորուն կոստանդին տուկիծ, սահակ փիսիկ, ալէքս անկեղոս, և այլ կայսերաց և մետրապոլտաց յունաց (մանաւանդ յամն 1060, 1188, 1197, ևն), որք աղգի աղգի խոշտանգանօք 'ի կրօնս իւրեանց դարձուցին զբազում հայս 'ի սահմանս իւրեանց

բնակեալս, որոց և շառաւիղք հայհոռոմ կոչեցեալք կան մինչև ցայսօր 'ի փոքրն հայս 'ի փաշայութեան արաբկերի։ Երրորդ՝ գաղթականութեամբ իբր 400,000 հայոց յանի քաղաքէն շիրակայ 'ի լեհաստան, յամս 1270=1320, ուր բնակեցան 'ի լէոպոլիս, 'ի պոտոլիա, 'ի վոլին, 'ի կամենից, 'ի լուցկա, և այլուր, և հետզհետէ առիթ տալով կաթուղիկոսաց և եպիսկոպոսաց մերոց՝ կրօնիւ և ամ սարօք դարձան առ լէհս և առ լատինս։ Թոռ զայն բազմութիւն հայոց՝ որք 'ի նոյն յանի քաղաքէ գաղթեցին յամին 1229, և եկեալ բնակեցան 'ի տէրութեան թաթարաց յախսարայ քաղաքի՝ ընդ մէջ աժտարխանի և զազանի, ուր և անհնարինս տառապեալք՝ փոխեցան անտի յամին 1330 'ի զրիմ կղզին 'ի քաղաքսն թէոդոսիա, կազարատ, սուրղաթ, և ն. և յայսչափ տեղափոխուելս պակասեցան ազգի ազգի օրինակաւ։ Չորրորդ՝ մեղադրելի ծուլութեամբ եկեղեցականաց մերոց, եպիսկոպոսաց և քահանայից, որք առ տգիտութեան և անհոգութեան ոչ լուսաւորեցին զժողովուրդն քարոզութեամբ աստուածային բանից, և պատճառ եղեն մերայնոց տգիտութեան և դառնալոյ յայլևայլ ժամանակս և 'ի տեղիս՝ 'ի կրօնս թաթարաց՝ դուրդաց՝ պարսից և տաճկաց։

Բաժին Հինգերորդ.

Եկեղեցին հայոց ընդ հահոյեպոկոն Լուսաւորչոյ պատմկաց և պարսից զամս 452. յամէ պէտուն 1375—1827.

§ 89.

Հայոց եկեղեցւոյն կուսուղիկոս, պատրիարգ, տրտիրոս, սուրբ, տապեհագիրս, ժողովք, հերձուածք, նուաստութիւն, ազգութիւն, հաւատք, ծէս.

Թէպէտ և ազգ մեր կէս իւրով, կէս օտարաց յանցանօք կորոյս զնեցուկն եկեղեցւոյ զմարմնաւոր թագաւորութիւնն, սակայն հիմնադիրն նորա Քրիստոս ըստ անստելի խոստման իւրոյ պահեաց և պահէ զեկեղեցի իւր յազգիս հայոց անվանելի և անյաղթելի 'ի դրանց դժոխոց՝ ըստ էական ին միշտ միօրինակ 'ի սկզբանէ և այսր անփոփոխ, այլ ըստ պատահականացն՝ յաւէտ կամ նուազ պայծառափայլութիւն և յառաջադիմութիւն որպէս և յայլ ամենայն ազգս քրիստոնէից. զի տկարութիւն մարդկային ոչ տանի զյաւերժական անփոփոխութիւն յայսմ կենցաղի. այդուբանիւ հանապազորդեցին գլուխ և անդամք և ամենայն կազմած մերս եկեղեցւոյ յայսմ միջոցի, յորում զաթոռն կաթուղիկոսական յետ պօղոսի առաջնոյ՝ կալան 49 անձինք մինչև ցղուկաս կարնեցի. յետ մահուան սորա (յամին 1799 'ի 27 դեկա) և զինի պէսպէս անախորժ անցից դա-

ւելի եպիսկոպոս տփխիսեցի բռնութեամբ օծաւ կաթուղիկոս Յէջմիածին 'ի 28 ապրիլի 1801. բայց 'ի յաջորդ ամի 'ի 15 մայիսի 'ի վանսն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին (իւչ քիլիսէ ասացեալ 'ի տաճկաց) մերձ 'ի տիատին քաղաք, օծաւ յօրինաւոր կաթուղիկոս պայազիտեցի Դանիէլ եպիսկոպոսն. որ զկնի հրաժարմանն դաւթի՝ եկն նստաւ Յէջմիածին յամին 1807 'ի 14 մայիսի։ Զկնի մահուան սորա 'ի 5 հոկտ. 1808. ընտրութեամբ ազգին եփրեմ արքեպիսկոպոս առաջնորդն ռուսաստանի օծաւ Յէջմիածին կաթուղիկոս յամին 1810 'ի 6 նոյեմբ։ Աթոռն հայրապետական յետ կալոյն 'ի հռոմկլայ զամս 147. և 'ի սիս նոյնպէս զամս 147. հուսկ ապա յամի տեառն 1441 վերստին փոխեցաւ 'ի սուրբ վանսն Էջմիածին, որ զկնի հաղարամեայ այրիութեանն և դատարկութեանն (յամէն 452—1441) թէպէտ միւսանգամ շինեալ զարդարեցաւ, բայց և կրեաց անթիւ տառապանս ընդ լծով պարսից և տաճկաց, որ յանչափս ֆնասեաց բարեկարգութեան և յառաջադիմութեան նորա յուսմունս գիտութեանց և բազմազգի լուսաւորութեանց։ 'Ի տեղափոխութեան հայրապետական աթոռոյն 'ի սոյ Էջմիածին, ուր նստաւ առաջին կաթուղիկոս տէր կիրակոս վերապեցի, կաթուղիկոսն սոյ Գրիգոր մուսալեկեանց՝ ապստամբութեամբ ոչ հնազանդեալ 'ի բաց դնել յանձնէ զայն պատիւ, եթող օրինակ և շառաւիղ չարութեան յաջորդելոց այլոց ևս յետագայից յայն ապօրինաւոր

աթոռ նոյնօրինակ անվաւեր կաթողիկոսուք մինչև ցայսօր, ըստ որոյ և ազգն մեր զսա և զուրուա կան կաթողիկոսն աղթամարայ՝ ոչ ճանաչէ աւելի ինչ քան զլոկ արքեպս ոք. յորս և չկայ ամենևին լուսաւորուի գիտուեոյ. զի արք գռեհիկք են գլխովին ինքեանք և միաբանք իւրեանց։ Զանուանս և զթիւ կաթողիկոսաց աղուանից յայսմ միջոցի 'ի գանձակ կամ 'ի գանձասար նստելոյ՝ յանձն առնեմք յետագայից տպագրուք 'ի լոյս ընծայել. վերջինն 'ի նոցունց եղև իսրայէլ կաթողիկոս, որոյ սահմանք իշխանուեն՝ գաւառքն գանձակայ, զարապաղու, շուշոյ և շաքիոյ, յամսն 1804 և 1805 անկան ընդ տէրուք կայսեր ռուսաց աղէքսանդրի առաջնոյ. և սա ըստ խնդրոյ կաթողիկոսին էջմիածնի՝ ոչ ետ հրաման կարգել անդ այլ ևս զոք նոյնպիսի պատուով. վասն ընդ մահուան իսրայէլ կաթողիկոսի՝ բարձաւ խսպառ և այն պիտակ իշխանուն։ 'Ի կոստանդնուպոլիս կայսերանիստ քաղաքի՝ յամի տեառն 1461 'ի գրաւել զայն տաճկաց 'ի ձեռաց յունաց՝ կարգեցաւ պատրիարգական աթոռ հայոց. ուր առաջին նըստաւ յովակիմ եպս պրուսայու. նմա յաջորդեցին 54 անձինք մինչև ցզաքարիա կաղզուանցի, 'ի մեռանիլ սորա յամին 1799 'ի 12 մարտի, հետզհետէ նստան պատրիարգ, Դանիէլ պայազիտեցի 'ի նմին ամի. Յովհաննէս Ժ բաբերդացի 'ի 19 մայիսի 1800. Գրիգոր Գ խամսեցի 'ի 19 դեկտ, 1801. Յովհաննէս Ժ վերատին 'ի 1803, Աբրահամ Ա քալեան 'ի 1806. Պօղոս Ա ադրիանուպոլսեցի 'ի 1813. Կարապետ Գ ադրիա-

նուպոլսեցի 'ի 1823 . որում 'ի մեռ աւուրս 'ի 1831 'ի 9 սեպտ , յաջորդեաց Ստեփաննոս երբորդ բաբինեան , որ և կայ յայն ամենառ ։

'Ի պատճառս քրիստոսական հաւատոյ մարտիրոսացան՝ աւագ բաղիշեցի , եղիսաբէթ արձիշեցի , զաքարիա կաթողիկոս աղթամարայ , թամար կամ գոհար մոկացի , խոսրով դանձակեցի , մելքիսեդ և կարապետ վանեցիք , յովհաննէս քահանայ յերապոլսեցի , իսահակ դավրէժացի , յիմար վկայուհի վանեցի , վարդան դատվանեցի , շնորհիոր բաբերդացի , նիկողայոս ամդեցի , սիրուն գնունեցի , գրիգոր կարնեցի , կոմիտաս և միքայէլ քահանայք , և այլ քանիք ։

Մատենագիրք յայս միջոց ժամանակի 'ի մեր ուղղափառ հայոց՝ համարին աւելի քան զհարիւր անձինք , որոց հռչակաւորքն են , 'ի 15 դարուն՝ (1401=1500) գրիգոր ծերենց , առաքել սիւնեցի , յակոբ ղրիմեցի , կիրակոս երզնկացի , թովմայ մեծոբեցի , առաքել բաղիշեցի , ամիրտովլաթ ամասիացի , յովհաննէս թուլկուրանցի , ուծատուր յովսանանց , և։ 'Ի 16 դարուն (1501—1600) թադէոս սեբաստացի, յովհաննէս ծարեցի , ղուկաս կեղեցի , յովհաննէս անթեպացի , յովհան առաքել պատմիչ , և այլք։ 'Ի 17 դարուն՝ (1601—1700) գրիգոր բաբերդացի , ներսէս մոկացի , սիմէոն ջուղայեցի , սիմէոն գառնեցի , ստեփաննոս լեհացի , առաքել դավրեժացի , ոսկան երեւանեցի , մատթէոս և ղուկաս վանանդեցիք , երեմիա էջմիածնեցի , երեմիա քեօրմիւրճեան , և այլք ։ Իսկ 'ի 18 դարու (1701=1800) եղեն , յովհաննէս կամ հաննա երուսաղէմացի , աղէք-

անդը կաթողիկոս Ջուղայեցի, գէորգ մելայիմ, Յովհաննէս վարդապետ Ջուղայեցի, Յակոբ թարգման Ճամճեան, մաղաքիա դպիր կոստանդնուպոլսեցի, աղէքսանդր կաթողիկոս վիսանթացի, Յակոբ պատրիարգ նալեան, պաղտասար կեսարացի, ղազար վարդապետ Ջահուկեցի, գէորգ դպիր և մեսրովբ երէց կոստանդնուպոլսեցիք, աբրահամ կաթողիկոս կրեատացի, Յակոբ դպիր Ջուղայեցի, սիմէոն կաթողիկոս երեւանեցի, պետրոս բժիշկ քալանթարեանց, մարգար զմիւռնացի, և այլք։

Բայց առ կորուստ գրագիտուն մերոյ, ոչ և պայծառուն եկեղեցւոյ՝ բազում ինչ զուգընթաց եղեն յայսմ վայրի, մանաւանդ քանամեայ աւերածուին բոլոր Հայաստանի 'ի լանկթամուրայ և 'ի զօրաց նորա յամսն 1382=1403, հաւաքելն նորին լանկթամուրայ զմատեանս մեր և փակելն յաշտարակի սմրղանտ քաղաքին յամին 1402, գաղթումն հայոց 'ի զանազան կողմանս աշխարհի, գերուելն և քանդումն քաղաքաց և վանորէից մերոց 'ի զանազան պատերազմաց և 'ի բռնաւորաց, ոչ 'ի սքանտարայ՝ զամս իբր 40 ('ի 1408=1438)։ 'ի շահթամասայ զամս 50 (1520—1570)։ 'ի շահաբասայ առաջնոյ զամս 30 ('ի 1600—1630)։ 'ի նատրշահէ զամս 15 ('ի 1730—1746)։ և յայլոց բազմաց։ Սակայն յայդ ամ տառապանս նախախնամուին ամենակալին ոչ եբարձ եթող զազգ և զեկեղեցի մեր, այլ արար Ճառագայթել 'ի մեզ զնոր ակն լուսոյ զարուեստ տպագրուն հայ մատենից, որով կառուցան յայլևայլ ժամանակս և 'ի քաղաքս տպարանք, յորոց սակի ցուցան

Ցանց պէտքն,

1565	'ի վենետիկ,	Սոքին փուլթով խափանեցան, յորս գերազանց և երկարատև ելև տպարանը ընդամենը տամի.
1567	'ի կոստանդնուպոլիս,	
1584	'ի հռովմ,	
1616	'ի լէոպոլիս,	
1624	'ի միլան,	
1633	'ի փարէս,	
1640	'ի ջուղայ,	
1660	յամստերտամ,	
1673	'ի մարսիլիա,	
1677	'ի կոստանդնուպոլիս,	
1680	'ի լիվսիա,	
1690	'ի բատուա,	
1705	'ի կոստանդնուպոլիս,	Սոքին մինչև ցայսօր շատ լթէ սակաւ պըտղաբերեն, բաց յոմանց.
1715	'ի վանս միսիթարեանց,	
1719	'ի կալկաթա և 'ի մատրաս	
1770	'ի ՀԲ էջմիածին	
1780	'ի բեռլրպուրկ,	
1790	'ի նոր նախիջևան	
1793	յաստրախան,	
1819	'ի մոսկով,	
1822	'ի տփխիս,	
1826	'ի շուշի,	

Գլխաւոր նախապատճառք այսր տնմահական շնորհաց՝ եղեն կաթողիկոսք՝ վարդապետք և միաբանք լուսաւորչական աթոռոյն էջմիածնի, տէր Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի շարժառիթ և կատարիչ բարեացս, որ զամս 25 (1655=1680) դուն գործեաց յորդորանաք՝ դրամովք՝ և ամ ի ըօք 'ի դլուխ հանել զայդ, Թովմաս եպս վանան-

դեցի, ոսկան և կարապետ վարդապետք, և Թա-
դէոս քահանայ երևանցիք, մատթէոս սարկա-
ւագ Ծարեցի, մատթէոս և ղուկաս վանանդեցիք,
ամենեքեան միաբանք էջմիածնի։ Յիշատակ ար-
դարոցդ օրհնուլ եղիցի, եղիցի և եղիցի։ Ազգա
լոյս օրինակի դոցա բարեխանձ հետևող գոան
հեղհեղէ և այլ յոլով հայրենաշէն անձինք, որ
պէս՝ իշխանք հայոց 'ի հնդկաստան, յակոբ պատ-
րիարգ նալեան 'ի կոստանդնուպոլիս, սիմէոն կա-
թողիկոս յէջմիածին, յովսէփ արքեպս տփխիսե
ցի 'ի բեռդրպուրկ, ներսէս արքեպս աշտարակե-
ցի 'ի տփխիս, և այլք այլուր. և երանի թէ յա-
ճախէին օր քան զօր այդպիսի հոմանախան-
ձորդք բարեաց։

Թէպէտ և 'ի յոգնաթիւ մատենից՝ յայդց գոր
Ծարանայ անուամբ և առանց անուան հեղինա-
կաց 'ի լոյս ընծայելոց (զորոց զցանկն ակն ու-
նիմք 'ի հայրենասիրէ ումեքէ տեսանել հրապա-
րակեալ), օգուտ և աճուն ընկալաւ եկեղեցի
մեր, բայց և կրեաց նուազուն ոչ սակաւ 'ի
պէսպէս ժամանակս և 'ի դէպս. իբրու այն՝ զի
գերուԹեամբ՝ վաղահաս մահուամբ և սրածուլ
բազումք 'ի հայոց պակասեցան 'ի նախայիշեալ
պատերազմունս պարսից և տաճկաց. և զի յո-
լովք ևս հատուածի ազգաւ գաղԹեցին 'ի հա-
յաստանէ և ցրուեցան յեւրոպիա, 'ի հնդկաս-
տան, 'ի պարսկաստան, 'ի տաճկաստան և 'ի ռու-
սաստան. յորոց փոխեալքն յեւրոպիա՝ յետ ժա-
մանակայ գրեԹէ ամենեքեան փոխեցին և զհա-
ւատս և դարձան առ լատինս, որպիսի եղեն

գաղթեալքն 'ի վենէտիկ 'ի 13=16 դարան, 'ի դրանսիլվանիա և 'ի մաճառս 'ի 16 և 'ի 17 դարուն, և 'ի լիվոռնա 'ի սկիզբն 17 դարուն։

Բայց առաւել քան զամենայն ինչ նուաղեցոյց զեկեղեցի մեր անջատուածն լատինահայոց 'ի հնազանդուէ կաթուղիկոսին էջմիածնի, սկսեալ գրեթէ յամէ տեառն 1700. արտաքին առիթ հերձուածոյդ եղեն խռովասէր բարք, ագահութիք և յիմար կառավարութիք եփրեմ, աւետիք, և յովհաննէս անարժան պատրիարգաց կոստանդնուպոլսի. իսկ առաջնորդք բաժանմանդ եղեն նախ՝ մխիթար վարդապետ սեբաստացի, որ յամին 1717 շինեաց վանք ինչ 'ի վենէտիկ։ Երկրորդ՝ աբրահամ վարդապետ առաջնորդ տրապիզոնայ, որ յամին 1720 գնացեալ 'ի լեառն լիբանան 'ի մէջ մառոնեցոյ՝ հաստատեաց զվանս կլօնաւորաց, և յետ քանի ամաց՝ հրամանաւ պապին հռովմայ կարգեցաւ կաթուղիկոս լատինահայոց. որուամ և մինչև ցայսօր յաջորդեն այլք 'ի լիբանան, բայց լոկ անուամբ է սա կաթուղիկոս. զի եպիսկոպոսք 'ի մերսին, 'ի կոստանդնուպոլիս, 'ի լէոպոլիս, 'ի վենէտիկ, և յայլ տեղիս եղեալք ոչ հնազանդին նմա, այլ կախին միայն զպապէն։

Եւ երրորդ բազմուի կարգաթող դասալիք վարդապետաց և եպիսկոպոսաց, որք պատրուակաւ ուրուական ուղղափառուի թողեալ զեկեղեցի մեր՝ անցին առ լատինահայս, և զսերմն հերձուածոյն փոխանակ չորացուցանելոյ մեզադրելի մշակուք աճեցուցին 'ի զանազան քաղաքս մին-

չև ցայսօր, 'ի կոստանդնուպոլիս, 'ի գաղատիա, 'ի կարին. յախալցխա, 'ի բերիա, և այլուր։

'Ի պատճառս հաւատոյ՝ ծիսից՝ և միաբանութեան ժողովեցան քանիցս եկեղեցականք և աշխարհականք մեր յԷջմիածին՝ յերուսաղէմ և 'ի կոստանդնուպոլիս, յորս և եղան ինչ ինչ բարեկարգութիւնք. այլ ոչ յաջողեցաւ միութին բաժանելոց, զուցէ և ոչ իսկ յաջողեսցի երբէք՝ ցորչափ նոքա պինդ ունին զնոր ուսմունս իւրեանց ան ծանօթս ամենևին նախնի սրբց հարց մերոց և ուղղափառ դաւանութեան հաւատոյ և ծիսից նոցա. յորոց և ոչ նշանախեց մի օտարացաւ եկեղեցի մեր 'ի սկզբանէ մինչև ցայսօր. ուր ընդ հակառակն՝ լատինահայք զամ ինչ նախնեաց փոխեցին. որպէս յուցին և ցուցցեն արդիւնաշատ վարդապետք և պաշտպանք հաւատոյս մերոյ.

Բաժին Ա. Եղեռորդ.

Ընդ էջեղեցին հայոց ընդ խրիստոնէից ուսոյ ի թուականս 1827.

§ 90.

Հայոց էջեղեցւոյն հանդիսիցս, պատարագաց, ժամակարգութեանց, ծիսից, տաճարաց, դպրոցաց, հերետիկոսաց.

Զ եկեղեցին հայաստանեայց համարիմք ընդ տէրութիւն ռուսաց, մի՝ զի զկեդրոնն միութեան մերոյ զառաքելական գահն լուսաւորչին զոր աթոռն էջ-

միածին՝ (ոչ և զբոլոր գաւառն արարատեան, ըզ սիւնիս, զտայս, զգուգարս, և՜ն) ընդ իշխանութիւն իւրով գրաւեաց առաջին Նիկողայոս կայսրն ռուսաց՝ առաջնորդութիւն երկրորդ պէնքէնտորֆի զօրագլխին յամի տեառն 1827 'ի 10 ապրիլի. միւս ևս՝ զի զկնի այդր 'ի պարսկաստանէ իբր 70,000 ոգիք, և 'ի տաճկաստանէ իբր 90, 000 հայք գաղթեցին 'ի ռուսաստան, որք ընդ այլոց նախաբը նակ հայոց՝ կացուցանեն այժմ գոգցես միլիոն մի ժողովուրդ 'ի ռուսաց երկրի. 'ի հանգստանալ այսու օրինակաւ սրբ աթոռոյն էջմիածնի՝ եփրեմ կաթողիկոսն՝ որ 'ի զբպարտանաց պարսից փախուցեալ էր 'ի ռուսաստան, դարձ արար 'ի յետագայ ամի յէջմիածին. բայց վասն խորին ծերութեն և տառապանացն յայտ արար սրբազան սինոդի աթոռոյն 'ի 8 հոկտ, 1830, թէ ինքն հրաժարի յայնմ ծանրակիր պարտաւորութէ. ծանոյց զայս և կայսեր ռուսաց, որոյ հաւանութիւն և ընտրութիւն ժողովոյն եպսց և վարդապետաց, օծաւ կաթողիկոս 'ի 8 նոյեմբ, 1831 Յովհաննէս ութերորդ կարբեցի, սրբազան արքեպսն և առաջնորդն տրփխիսոյ, որ և վարէ այժմ զիշխանութիւն իւր բազում ազգասիրութեամբ.

Ընդ իշխանութիւն ծայրագոյն պատրիարգին և կաթողիկոսին էջմիածնի՝ իբրու ընդ միապետական երևելի գլխոյ ազգի և եկեղեցւոյ մերում, 'ի կանուխ ժամանակաց և այսր գտանին իբր 60 վիճակաւոր արքեպսք ընդ վիճակայ իւրեանց. որոյ երևելիք են յետագայքդ. նախ՝ 'ի տաճկաստան՝ 1 պատրիարգն աղթամարայ, 2 պատրիարգն սսոյ.

ՀԱՅԿ ԱՄԱՍԻՈՅ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՍՏՈՑ ԱՇԽԱՐՀ

3 պատրիարգն երուսաղէմի • 4 պատրիարգն կոս-
տանդնուպոլսի • ապա արքեպսքն 5 զմիւռնիոյ • 6
կարնոյ • 7 մշոյ ՝ եբ կարապետի • 8 վան քաղաքի•
9 տիգրանակերտի • 10 սեբաստիոյ • 11 եդեսիոյ•
12 ակնայ • 13 արաբկերոյ • 14 բարձրահայեաց
վանաց արղանայի և վիճակի նորա • 15 բալուայ•
16 խարբերդոյ • 17 մանազկերտի • 18 էրզնկա-
յի • 19 սասնոյ • 20 կարուց • 21 սբ գրիգորի վա-
նայ և պայազիտու • 22 բասենոյ և հասանզալա-
յի • 23 ամասիոյ• 24 գաղատիոյ• 25 կուտինայի •
26 պանտրմայի • 27 եւդոկիոյ • 28 տրապիզոնու •
29 եգիպտոսի • 30 պաղտատու և պասրայու •
31 իզնիմիտոյ • 32 կեսարիոյ • 33 պրուսա-
յու • 34 ադրիանուպոլսոյ • 35 թէքիրտաղու կամ
վիսանթայ• և այլոց քանի մի քաղաքաց և վանորէ-
ից • երկրորդ՝ 'ի ռուսաստան արքեպսքն, 36
նոր նախիջևանայ և պէսարապիոյ • 37 աժտարխա
նի • 38 տփխիսոյ • 39 ախալցխայի• 40 սանահնոյ
և վիճակի նորա • 41 գանձասարայ և գանձա-
կայ • 42 հին նախիջևանայ • 43 ղարապաղու և
ամարասայ վանաց • 44 երևանայ • 45 սիւնեաց
և տաթևոյ վանաց • 46 հաղբատայ• 47 բջնոյ
և նիդ գաւառի, ևն • երրորդ՝ 'ի պարսկաս-
տան արքեպսքն, 48 արտազու կամ վանաց
գերեզմանի թադէոսի առաքելոյն • 49 սալմաս-
տոյ և վանաց գերեզմանի բարթուղիմէոսի առա-
քելոյն • 50 սպահանի և հայոց հնդկաստանի •
51 խրամ քաղաքի կամ տարաշամբայ և ստեփան-
նոսի վանաց, և այլք աստ և անդ• որք ՝ բերման
ժամանակի է զի առաւելուն, և է զի պակասին։

Մատենագիր մեզ յայսմ դարու՝ ՆՆՋԵՑԵԱԼՔ և ԿԵՆԴԱՆԻՔ, զոսն հետևեալքդ, պօղոս պատրիարգ անդրիանուպօլսեցի. սերովբէ վարդապետ կարնեցի, յարուն վարդապետ աժտարխանեցի. պօղոս վարդապետ ղարատաղցի. յովսէփ վարդապետ արցախեցի. միքայէլ վարդապետ կոստանդնուպօլսեցի. աբրահամ սարկաւագ վաղարշապատեցի. գաբրիէլ սարկաւագ տփխիսեցի. գրիգոր փեշտըմալճեան կոստանդնուպօլսեցի. յովհաննէս ավդալեան շիրազեցի. յարուն ջուղայեցի. մեսրոպ դպիր թաղիադեանց, յովսէփ օրպէլեան մոզոզքեցի, սարգիս տիգրանեան նախիջևանեցի, մկրտիչ էմինեան ջուղայեցի, և այլք ոմանք։

Ապատակօք հեղինակացդ և աղգասէր ջանիւք եաՀսց և իշխանաց մերոց՝ պայծառացաւ այժմ՝ առաւել քան զոր յառաջն գրագիտուն մեր. արծարծեցաւ եռանդն ուսումնասիրուն, և ծաղկեցան բազում դպրոցք 'ի զանազան քաղաքս, մանաւանդ յէջմիածին, 'ի կոստանդնուպօլիս, 'ի կալկաթա, 'ի մոսկով, 'ի նոր նախիջևան. և այլուր. յորս այժմ վարժին հազարաւոր մանկունք ազգիս 'ի զանազան լեզուս և 'ի գիտուն։

Լատինահայք տեսեն ցայսօր յիւրեանց բաժանման, յորոց բնակեալքն 'ի կոնստանդնուպօլիս՝ միով ամաւ յառաջ ընկալան 'ի թադաւորէն թոյլտուուն կանգնել ինքեանց եկեղեցի, և ունել զառանձին պատրիարգ, յոր կարգեցան՝ ըստ իրին անտոն եպիսկոպոս նուրիճեան, այլ ըստ երևութին՝ յակոբ ոմն եպիսկոպոս։ Առ նոսա մխիթարեան ասացեալ կրօնաւորքն

առաւելուն քան զայլ եկեղեցականս նոցա ու-սուցեասիրութիւն, որք յամէն 1780 և այսր տպեցին ինչ ինչ պիտանի մատեանս (իմա՝ քաց յայնց յորս հակառակին հաւատոյ և ծիսից մերոց), զի տպեալքն յառաջ քան զայդ թուական՝ անպիտան են ամենևին։

Յայսմ վայրի կնքեալ զհամառօտագրութիւն մեր՝ այլոց ուղղափառ ուժաւոր և սրատես հայրենասիրաց մերոց թողումք զասպարէզդ։

ՎԱԽԱՆ.

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 թ.